ալը ճանչեցի՝ բռնեցին զիս : Բոնարարութիւն չըրին ինձ . սակայն  
անոնց երկորը թեւերէս բռնեցին , և երրորդը զբաններս նայելով  
պլատի գանակ մը հանեց . այս էր միայն իմ վրայ ունեցած զէնքս :  
Ներումն ինդրեցին իղմէ ըսելով թէ հետո յարգմաք չվարուելու  
հարկադրուած էին . բնականաբար ըսին նաև թէ հօրս հրամանաւն  
այսպէս կը վարուէին , և թէ մեծ եղայրս գուրսը կառքի մը մէջ  
ինձ կսպասէր : Այնքան շփոթեր էի որ առանց զիմագրելու և պա-  
տասխան տալու հաւաքութեալու : Եղայրս իրօք ինձ կսպասէր \*  
Կառքին մէջ իր քովը զրին զիս , և կառապանը առած հրամանին  
համեմատ մինչեւ Սէն-Տրնի տարաւ մեղի խիստ արադութեամբ : Եղ-  
բայրս խանդաղատութեամբ պատաւ զիս , բայց չխօսեցաւ հետո , հե-  
տեաբար կատարելապէս ունեցայ այն պարապ ժամանակը որու հար-  
կաւորութիւն ունէի դժբաղդութեանս վրայ մտալու համար :

Նախ այնքան մէին երեցաւ ինձ այս դժբաղդութիւնս որ ամենաւ  
փոքր կարծիք մը լսյ չէր տար ինձ : Անդմարար մասնուեր էի .  
բայց ո՞ւ էր մասնիչը : Ամենէն առաջ թիպերմն եկաւ միտքս :  
«Մատնի՛չ , կըսէի , ա՛լ չպիտի ապրին , եթէ հաստատին կաս-  
կածներս :» Սակայն խորհեցայ որ ան չէր զիտեր ո՞ւր բնակիլս , և  
թէ հետեաբար չէին կրնար անորմէ իմացած ըլլալուր բնակիլս : Իսկ  
Մանօնը ամբաստաննելը յանցանք մ'էր զոր սիրտս չէր համարձակիլք

Կործելու : Այն արտաքոյ կարգի տրտմութիւնը որով զինքը բռն լրտպին համակուած տեսեր էր, իր արտառքը, և այն սիրաշունչ համբոյըը զոր տուած էր ինձ իր խուցն երթալով, անշուշտ հանելուկ մը կերեային ինձ, սակայն Սանօնին տրտմութիւնը, արցունքը և համբոյըը մը երկութին դժբաղդութեան նկատմամբ նախազ զացում մը համարելու և այս իբրով հանելու դրդում կցայի, և այն ժամանակ ուր իր յուսահասեի զիս Սանօնին յափշտակող այս դէպքին վրայ, զիւրահաւանութեամբ կերեակայէի թէ իզմէ աւելի կարեկցութեան արծանի էր ան :

Խորհրդածութեան համական եղաւ համոզուիլ թէ բարիզի փոադոյներուն մէջ քանի մը հանչորներ զիս նշմարելով հօրս իմաց տուեր են : Այս մտածու մն սփոփեց զիս : Աը յուսայի ազատիլքաս նի մը յանդիմանութիւններով կամ քանի մը պատիմերով զոր կը պարտաւորէի կրել հայրական իշխանութենին : Ծուտով բարիլ վերադառնալու և սիրելի Սանօնիս կեանք և ուրախութիւն տալու առ ովհը վիւրացնելու համար որոշչելի համբերութեամբ կրել այն յանդիմանութիւնները կամ պատիմները, և խոստանալ ինչ որ պիտի պահանջուէր իզմէ :

Ծուտով Սէն-Տընի հասանք : Եղբայրս լուութեանս վրայ վարմացացաւ և կարծեց թէ փախնալս էր լուելուս պատճառը : Ռւսափ սիրաս մխիթարել զիս հաւասարելով թէ չէի պարտաւորեր ամեննեին վախնալ հօրս խստութենին՝ բաւական էր որ արամադրութիւն ու նենայի սրարտաւորութիւնն վերտանի ձանչելու հեղութեամբ և արժանի ըլլալու այն դորովին զար հայրս ունէր իմ վրայ :

Եղբայրս Սէն-Տընի մէջ անցունել տուաւ ինձ զիւերը՝ երեք սպասաւորները սենելիս մէջ պառկեցնելու զդուշութեամբ :

Գառն ցաւ մը զդացի տեսնելով թէ կը դանուէի Ճիշդ այն պահն դոկին մէջ ուր Մանօնին հետ իջեր էինք Ամիենին Բարիզ զարով : Պանդոկապեան ու ծառաները ձանչեցին զիս և պասմութեանս հշմարտութիւնն ալ գուշակեցին : Լսեցի որ պանդոկապեալին կը ինձ : «Ա՛Հ, ասի այն աղոր պատանին է որ ասկից վեց շաբաթ առաջ կանցնէր պղտիկ աղջիկի մը հետ զոր այնքան կը սիրեր : Որքա՛ն սիրուն էր աղջիկը : Ինչպէ՞ս կը պազնուէին և կը սիրուէին ինդ :

Կատանիները : Մե՛ղք որ բաժներ են զիրենք : Քան մը չըսեցուցի, և աշխատեցայ կարելի եղածին չափ քիչ տեսնուելու : Եղբայրս Սէն-Տընի մէջ երկու հոգիի կառք մ'ունէր որով առ տու կանուխ մեկնիցնակ, և երկրորդ օրն իրիկուն մեր առնը հասանք : Խզմէ առաջ զար ահսաւ որպէս զիս բարեխօսութիւն ընէ ինձի համար՝ իմայն իմայնելով անոր թէ ինչպիսի հեզութեամբ հասւաներ էի որ տանին զիս, հետեաբար հայրս ընդունեց զիս ոչայնքան խստութեամբ որքան կը կարծէի : Միայն քանի մ'ընդհանուր յանդիմանութիւնները ըրաւ այն յանցանիքին վրայօք զոր գործեր էի առանց իր հրամանին բացակայ ըլլալովս : Խոկ տարփուհիս նկատմամբ խօսելով ըստ թէ շատ աղէկ արժանի էի այն իրողութեան որու ենթարկուեր էի անձանօթ կնիկի մ'անձնատուր ըլլալով : Թէ խոհեմութեանս վրայ լաւագոյն զաղափար ունեցած էր, և սակայն կը յուսար թէ այս սպափի արկածն այսուհետեւ աւելի խոհեմ պիտի ընէր զիս :

Այս խօսերուն տուի այն նշանակութիւնն որ կը համաձայնէր գաղափարներուս հետ : Ընորհակալ եղաց հօրմէս բարեսիրաբար ինձ Ներելուն համար, և խօսք տուի աւելի հլու և կանոնաւոր վարք ու նենալու :

Սրտին ներսէն կը յաղթանակէի, վաճա զի տեսնելով թէ ինչ պէս կը կարդագրուէին զործերը, ասպահով էի թէ աղաստութիւն պիտի ունենայի տունէն խիլ խոյս տալու առաւօտ չեղած :

Սկզբն նասանք ընթերլու համար . ծաղրեցին զիս Ամիենի մէջ Մանօնը դրաւելով սիրելուս և այս հաւատարիմ տարփուհիս հետ փախելուս վրայ : Յօմարակամ ընդունեցայ հարուածները : Աը հըճուէի խիլ տեսնելով թէ ներելի էր ինձ խօսակցութեանս առարկայ ընել ինչ որ ուշ կը զրաւէր շարունակ : Սակայն հօրս բերնէն քանի մը խօսք փախելով պարտաւորեցին զիս սասափիկ ուշադրութեամբ ականջ տալու : Պ. Տը Պ. . . ին նենդութեան և շահագիտար ընած ծառայութեան վրայ խօսեցաւ :

Ապշեցայ մնայի այս անուան տրուիլ խելով, և խոնարհաբար առաջցի հայրս որ աւելի բացաբաւութիւն ասյ : Գէպ եղբայրս գարձաւ՝ հարցնելու համար թէ պատմած չէ՞ր ինձ բողոքութիւնը :

Եղայրս պատամիան տուաւ թէ համան զիս բոլորովին հանդարս տեսնելով չկարծեր էր թէ այս դարմանին հարկաւորութիւն ունենայի խենդութեանս բոյժը գանելու համար : Դիաեցի որ հայրս կը վարանէր ամբողջապէս բացատրութիւն տալու : Այսքան թախանաձանօք աղաչեցի որ դո՛ք ըրաւ , կամ՝ լաւ ևս է քսել՝ անդթաքար սպաննեց զիս ամենասուկալի պատմութեամբ :

Նախ հարցուց ինձ թէ տարփուհիէս սիրուած ըլլալս հաւտարս միամոռութիւնը միշտ ունեմի թէ ոչ : Համարձակապէս ըսի թէ կատարելապէս ապահով էի սիրուած ըլլալուս և թէ ոչինչ կրնար այս մասին ամենափոքր կատկած մը տալ ինձ :

—Հա՛մ, Հա՛մ, զոլցի բոլոր ոյժովը , աղէ՛կ , շա՛տ աղէ՛կ : Ջուարձակի միամիտ մ'ես եղեր , և սիրելի է ինձ այդպիսի զգացումներ ունենալու տեմնել : Խե՛ղթ իմ ասակետ , մե՛ղք որ Մալթայի ուխտը պիտի մտնես , քանի որ այդքան տրամադրութիւն ունիս համբերատար և հանդարտ էրիկ մ'ըլլալու : »

Աւրիշ այս տեսակ բիւր հեղնութիւններով ծաղրեց ինչ որ ապահով թիւնա և դիւրահաւանութիւնս կամուանէր ան :

Վերջապէս լուռ կենալս տեսնելով՝ շարունակեց իր խօսքն ու ըստ թէ կրնար հաշուել Նմիէնէն մեխնելիս ՚ի վեր քանի որ անցած ըլլալը , և թէ այս հաշուին համեմատ Մանօն տասներկու օրի չափ սիրած էր զիս : « Վասն զի , շարայարեց հայրս , զիտեմ որ անցեալ ամսոյ 28ին մեխնեցար Նմիէնէն , այսօր ներկայ ամսոյս 29 է . Պ. Տը Պ. . . տասնումէկ օր առաջ գրած էր ինձ , կենթաղբեմ թէ ութ օրի հարկաւորութիւն ունեցաւ տարփուհիք հետ անթերի յարաբերութիւն մը հաստատելու համար , ուստի եթէ տասնումէկն և ութը հանենք երառնը մէկ օրէն որ անցաւ միւս ամսոյ 28էն մինչ ներկայ ամսոյս 29ը , կը մնայ տասներկու օր , քիչ մ'աւելի կամ պակաս :

Եւ քահ քահները նորէն սկսան :

Այս ամեն բաները կը լսէի սրտի այնպիսի տակնապով մ'որու կը վախայի թէ չպիտի կրնամ դիմանալ այս տրտոնալի կատակերդութեան մինչեւ վերջը :

—Դիտոցի՛ր ուրեմն , կրկնեց հայրս , քանի որ գեռ չղիտես , թէ

Պ. Տը Պ. . . իշխանուհիիդ սիրտը շահեցաւ , վասն զի կը ծաղրէ զիս ուղելով համոզել թէ անշահախնդրութեամբ ինձ աղէկութիւն մ'ընելու եռամնդով ուզեր է Մանօնդ քեզմէ յափշտակել : Այդպիսի մարդու մը գործը չէ այսքան ապնիւ զգացումներ կրել , մարդ մը որ նաև Ծանչը զիս : Մանօնէն իմացաւ թէ տղաս ես ; և՝ ձանձարութիւններէզ աղատելու համար՝ ուր բնակիրդ և ինչպիսի անկարգութեամբ ապրիրդ գրեց ինձ ; իմացնելով թէ քեզի բանելու համար թիկունիք պէտք է . առաջարկեց նաև անձամբ գիրացնել քեզի օձիք քեզ բոնելու միջայները , և իրօք ելլայրդ անոր և տարփուհիիդ առողջնորդութեամբը քեզի առանց զիմադրութեան բանելու վայրէկեանը դտաւ : « Նորհաւարէ՝ ուրեմն ինքզինքդ յաղթանակիդ տեսումին վրայ : Կրնաս բաւական շուտ յաղթել ; ասպե՛տ : սակայն չես կրնար պահէլ յաղթանակիդ :

Ա յժ չունեցայ զիմանալու այս խօսքերուն որու մէն մի բառը սիրս ծակած էր : Սեղանէն ելայ , և սրահէն գտնը ելնելու համար հազիւ չորս քայլ առեր էի , և աչա զետինն ընկայ բոլորավին նուաղելով :

Արագահաս օգնութեանց նորհիւ սիթափեցայ նուաղումէս : Բացի աշերա՝ հեղեղապէս արտասուելու , նաև բերանս՝ ամենէն տրտմալի և սրտառուչ գանդամները արտաբերելու համար : Հայրս որ միշտ գորովապէս սիրեց զիս , իր բոլոր խանդակալսութեամբն աշխատեցաւ ինձ միինթարութիւն տալու համար : Մաֆիկ կրնէի , սակայն չէի լըս սեր իր խօսքը : Ոտքն ընկայ և ձեւնամած աղերսեցի որ թոյլ տայ ինձ բարիկ վերադառնալու և Պ. . . ը գաշունելու համար :

—Զէ՛ , կրսէի հօրս , Մանօնին սիրտը շշահեցաւ Պ. . . բունութեան բանեցաց իր վրայ , կախարդութեամբ կամ թոյնով Մանօնը թերեւս անամնաբար բոնաբարեց : Մանօն կը սիրէ զիս : Քաջ զիս տեմ թէ կը սիրէ : Պ. . . դաշոյն ՚ի ձեւնին սարանալիք բրած է անոր որպէս զի զան խ ճկելու բոնաբարեց : Խնչե՞ր ըրած չէ արդեօք իզմէ յափշտակելու համար այնքան զմայլելի տարփուհի մը : Աստուած իմ , մի՛թէ կարելի բան է Մանօնին զիս մասնելն ու սիրելէ գաղրիլը :

Հայրս տեսնելով թէ անմիջապէս Բաղիկ էր թալու խօսքը կընէի 3

միշտ և թէ ամեն բոսկ ոտք կենէի մեկնելու համար, շատ աղէկ հասկցաւ թէ ոչինչ կրնար կեյնել զիս այն բարկալի վիճակին մէջ ուր կը գտնուէի : Ուստի վերին մենեակ մը տարաւ զիս ուր քավս երկու ծառայ թողուց որպէս զի անընդհատ հսկողութեամբ պահեն զիս : Ալ ինքընքս չէի զսպեր : Կուզէի բիւր կեանք զոհել միայն քառորդ մը բարիզի մէջ զտնուելու համար : Հասկցայ որ դիտառութիւնս յայտնապէս ըսած ըլլալով սենեկէս դուրս ելնելու հրաւ ման չպիտի ընդունէի դիւրութեամբ : Նշջով պատու համեներուն բարձրութիւնը չափեցի : Այս ճամբէն խոյս տարու ամենեին հնարաւորութիւնը մը չեմնելով՝ հեղութեամբ երկու սպասաւորներուն դիմեցի: Քիւր երդումներ ընելով խօսք տուի անցնց թէ օր մը պիտի հարըս տացնեմ զիրենք եթէ ուղեն հաւանիլ փախուստիս : Ստիպեցի, գգուեցի զանոնք, նաև սպասնացի, բայց այս փորձն ալ անօգուտ եղաւ : Անասեն բոլորովին յոյս կտրեցի : Որոշեցի մեռնիլ, և անկողնի մը վրայ նետուեցայ մինչև մահս չենելու դիտաւորութեամբ: Գիշերն և հետևեալ օրն այս կացութեան մէջ մնացի : Երկրորդ օրն ինձ բերուած կերակուրը մերժեցի : ✕

Վէսօրէն ետք հայրս եկաւ հետո տեսնուելու : Բարեհ հաճեցաւ վիշտ տերս ողբեկու ամենաքաղցը միխթարութիւններով : Այնքան բացարձակապէս հրամայեց ինձ բան մ'ուտել որ իրօք կերայ իր հրամանանը յարգելու համար : Քանի մ'օր անցաւ, և այս քանի մ'օրուան մէջ միայն իր առջեն և իրեն հնապանդելու հսմար բան կերայ : Շարունակ և միշտ կը յիշը ինձ այն սպատճառները որոնցմով կրնայի ուղիղ դատողութեանս վերստին տէրն ըլլալ և արհամարհանք ըզ դալ դրուժան Մանօնին գէմ :

Իրաւ է որ ալ չէի յարգեր զան : Բնչպէս յարգէի արարածներուն ամենէն յեղյեղուին ու նենդառորը : Սակայն իր պատիերը, և շնորհալի գէմը զօր սրախ մէջ կը կրէի, միշտ անջնջ կը մըս նային : Ազգայի թէ աղէկ եմ: «Կրնամ մեռնիլ, կըսէի իւրովի, պէտք է իսկ մեռնիլ առանց մոռնալու կարենալու ապերախտ Մանօնը : »

Հայրս կը զարմանար միշտ զիս այնքան յուզուած տեսնելով: Գիւտէր թէ պատույ սկզբունք ունէի, հետևաբար չկրնալով տարակու-

սիլ Մանօնը՝ մատնութեանը փոխարէն՝ արհամարհէլուս նկատմամբ երևակացեց թէ հաւասարմութիւնս աւելի կանանց մասին ընդհանուր յօժարութեան մը քան թէ մասնաւորապէս այս տրփաղին սիրոյս հետեւութիւնն էր : Այնքան յարեցաւ այս կարծիքին որ իմացն իր գորովալի միրոյն հետ խորհրդակացնելու ետք օր մ'եկաւ և իր այն կարծիքին վկայօք խօսք բացաւ :

—Ասպի՞տ, ըսաւ հայրս, մինչև հիմա քեղի Վալթայի ուխտին խաչը կրել ապալու դիտաւորութիւնը ունեցայ . բայց կը տեմնեմ որ յօժարութիւններդ գէպ այն կովը չեն միտիր : Աղոր կիմերը կը սիրես, ուստի միտք ունիր աղոր կիմ մը բնակելու որ հաճելի ըլլայ քեզ: Պարզապէս ըսէ ինձ թէ ինչ են կարծիքներդ այս մաս սին : »

Պատասխանեցի թէ ալ խտրութիւն չէի տեմներ կանանց մէջ, և թէ բոլոր կիմերը հաւասարապէս կը քամահըլի այն կժբաղդութեանէն ետք օր պատահած էր ինձ :

—Պիսի բնտեմ այնպիսի կիմ մը, ըսաւ հայրս ժպտելով, որ Մանօնին պիտի նմանի և աւելի հաւասարիմ պիտի ըլլայ :

—Ա՛խ, եթէ կուլիս բարութիւն մ'ընել ինձ, բաի, պէտք է Մանօնը տալ ինձ : Ապահով եղի՛ր, հայր իմ սիրելի, թէ անմասնութիւն մը չըրաւ : Մանօն կարող չէ այսպան զարշելի և անաւ գորոյն վաստութիւն մ'ընելու : Նենդառորն է Պահապահ զանչ ինչպէս նաև քեղի և զիս : Եթէ զիմնայիր թէ որքա՞ն գորովասիրած և անկեղծ է Մանօն, եթէ ճանչէիր, սիրահ սիրէիր զննին իբր քուանձու :

—Յիրաւի տղա՛յ ես եղեր, կրիսեց հայրս : Կնչպէս կրնաս այդք քան կուրնալ այն ամեն իրովութիւններէն ետք զոր քել պատմեցի իր վրայօք : Կնքն անձամբ եղորդ մասնեց քեղի: Ար պարտաւորիս իր անունը անդամ մոռնալ և քեղ ցայց տուած ներդղամտութենէս օգուտ քաղել՝ եթէ խելք ունիս : »

Հատ աղէկ կը տեմնէի որ իրաւունք ունէր հայրս : Վրուժան Մանօնիս կովը բանելու դրդուեր էի ակամայ զզացումէ մը :

—Բա՞րէ, կրինեցի պահ մը լուռ կենալուն ետք, շատ իրաւ թէ ամենավատ նենդութեան մը զժբաղդ առարկան եմ: Այս, շատ

բունակեցի՝ սրտամսութեամբ արցունք թափելով, քաջ կը տեսնեմ  
որ տղայ մ'եմ։ Անոնց համար զբեթէ մեծ գժուարութիւն մը չէր  
խարել դիւրահաւանութիւնս։

«Բարիլ պիտի երթամ, ըսի ու ին տունը կրակի պիտի տամ  
և զինքն ալ կինդմաւոյն պիտի այրեմ նենդաւոր Մանօնին հետ։»

Այս բարկութիւնս հօրս խնդուկը բերաւ, և զիս բանտիս մէջ  
աւելի հսկողութեամբ պահել տալու ծառայեց միայն։

Ամբողջ վեց ամիս այսպէս բանտարկուած մնացի. առջի ամիսա  
ուան մէջ տրամադրութիւններս մեծ փոփոխութիւն մը չլրեցին։ Ճա-  
րունակ և փոփոխակի տաելութիւն և սէր, յոյս և յուսահատութիւն  
կզայի միայն այն տեսմիլն համեմատ որով Մանօն կերևար մնքիս։  
Երբեմն աղջիներան ամենէն չնորհալին կը համարէի և զան վե-  
րաստին տեսնելու փափաքով կը մաշուէի. երբեմն ալ վատ և գրու-  
ժամ տարիուչի մը կերևար ինձ, և բիւր երդումներ կընէի զինքը  
միայն պատժելու հանը բնառելու։

Ինձ զիրբեր տրանեցան որք հոգիս փոքր ինչ հանդարտելու ծառ  
ուայեցին։ «Սորէն կարուացի ամեն հեղինակներուս երիշը. նորանոր  
հմտութիւններ ստայայ. վերստին անհուն յօժարութիւն մ'ունեցայ  
ուսումնին համար։

Եաբը պիտի տեմնես թէ ապադային մէջ ինչու օդտակար ե-  
ղաւ ինձ այս յօժարութիւնը։ Ծնորհիւ այն լցուերուն, զոր սիրոյ կը  
պարտաւորէի, յայտնի և մեկին երեցան ինձ Ռվատիսին և Ակր-  
դիլուսին շատ մը կտորներն ողբ տաենօք մթին երկներ էին ինձ։

Սիրաշոնչ մեկնաբանութիւն մը գրեցի հետաքանին չորրորդ գրքին  
վրայ զոր օր մը պիտի հրատարակեմ և որմէ կը յուսամ թէ հա-  
սարակութիւնը դոհ պիտի ըլլայ։ «Բա՛թէ, կըսէի զբելով այն մեկ-  
նաբանութիւնը, իմինիս պէս սիրու մը պէտք էր հաւատարիմ Տիւ  
տօնին։

Թիսկերծ օր մը բանսու եկաւ հետո տեսնուելու։ Զարմանք տուաւ  
ինձ աւիւնն որով համբուրեց զիս։ Կը սիրոյն նկատմամբ դեռ  
չունեցած էի այնպիսի ապացոյցներ որոնցմէ պարտաւորէի դպրոցա-  
չան պարու բարեկամութենէ աւելի բան մը սեպել իր սէրը, կակ-  
նարկեմ այն բարեկամութեան որ զբեթէ մի և նոյն հասակն ունե-

շող ամեն պատանիներու մէջ կը կազմուի։ Թիսկերծը կարի փոխ-  
ուած և կազմակերպուած դտոյ հինգ կամ վեց ամիսէ ՚ի վեր զոր ան-  
ցոցեր էի առանց տեմնելու զինքը, ուստի իր կերպարմնքնու խօսելուն  
ձեն ակնածութիւնն ներշնչեցին ինձ։ Խօսեցաւ հետո աւելի իբր զդօն  
խրատասու քան մէկ դպրոցական բարեկամը մը։ Ցաւեցաւ այն մո-  
լորութեան վրայ ուր ընկեր էի. շնորհաւորեց զիս բժշկութեանս  
համար զոր յառաջացած կը կարծէր, վերջապէս յորդորեց զիս օ-  
գուտ քանելու այս երիտասարդական մոլորումն և ըստ այնմ աչքս  
բանալու հեշտութեանց ունացնութեան վրայ։

Զարմանք իրեն նայեցայ։ «Նշմարեց զարմանալս։

— Միրելի ասպետու, ըստու, խօսերուս մէջ չկայ բան մ'որ հաս-  
տատապէս ճշմարիս չըլլայ և որու մասին անաշատ քննութեամբ մը  
համոզուած չըլլամ։ Ես ալ քեդի չափ հետութիւնը սիրելու մի-  
տում ունէի, բայց երկինք միանգամայն առաքինութիւնը սիրելու յօ-  
ժարութիւն տուած էր ինձ։ Խելքս զործածեցի մէկին և միւսին  
արդինքը բաղդատելու համար, և աչա շուտ մը գտայ անոնց տար-  
բերութիւնները։ Երկնային օգնութիւնը խորհրդածութեանց հետ  
միացաւ։ Նշմարհիս դէմ սրախս մէջ ծնաւ այնպիսի արհամարհանք  
մ'որու ոչինչ կը հաւասարի։ Աը զուշակես մէկ ի՞նչ բան է զիս  
աշխարհիս մէջ կեցնողը, շաբայարեց, և թէ՛ ի՞նչ բան կարգիլէ-  
զիս դէպ առանձնակեցութիւն վաղելու։ Լոկ այն սիրալիր բարեկա-  
մութիւնն է զոր ունիմ քեդի համար։ Աը ձանչեմ սրախտ և մոքիդ  
ապնուութիւնը. չլայ բարի բան մ'որու տէրն ըլլալու անկարող ըլ-  
լան։ Հեշտութեան թշնը շեղեց քեզի համբայէդ։ Ի՞նչ կորուսա  
առաքինութեան համար։ Նմինէն փախչելլ այնքան վիշտ պատ-  
ճառեց ինձ որ անկից ՚ի վեր պահ մը գոհունակութիւն չվայելեցի։  
Որքան դժոհութիւն կրած ըլլալ կմաս գատել այն շաբժումներէն  
զոր ընել առած էր ինձ փախուստ։»

Եւ Թիսկերծ պատմեց ինձ թէ զինքը խաբած և տարփուհիս հետ  
փախած ըլլալ նշմարելն եաք ձի մը հեծեր էր ետեկս դալու հա-  
մար, թէ սակայն չորս կամ հինգ ժամումն ձաւելու չափ իրմէն ա-  
ռաջ անցած ըլլալու պատճառաւա չկրցած էր ետեկս համնիւ. թէ  
պատու ամենային մինչև Սէն-Տընի հասած էր անփէ մեխնելս կէս

զամի չափ առաջ . թէ խիստ ապահովապէս դիմուալով որ Բարիկէ մէջ կանկ պիտի առնում , ինքն ալ եկած և վեց շաբաթ հոն կես յած էր իս բնատութիւնը՝ ի նամակ , թէ կերթար այն ամեն տեղերն ուրկը յուսար գտնել զիս և թէ վերջապէս օր մը թատրոնին մէջ ճանչցած էր առարկուհիս . թէ այս օրիորդին կարի շքեղապէս հաղուած շքուած ըլլալը տեսնելով երևակյեր է թէ Մանօն նոր սիրով մը կը պարտաւորի այն հարստութիւնը . թէ անոր կառքին եւ տեէն զայեր է մինչև առնը և իմացեր է ծառայէ մը թէ Պ . Տը Պ . . . ին առատաձեռնութիւններով կը պահուէր ան : « Այսպահով զո՞չ չեղայ , շարայարեց Թիվերժ , հետևեալ օրն անձամբ Մանօնին տունը զայի ինչ եղած ըլլալդ իրմէն իմանալու համար : Կոշտութեամբ թողուց զիմ քու վրայ խօսիլս լսելով , և ստիպուեցայ դաւառը վերապահնալու առանց տրիշ տեղի կութիւն մ'առնելու : Հոն իմացայ գէպրդ և այն զարհուրանքը զօր քեզ պատճառած էր այն բայց չուզեցի աեմնուիլ հետդ առանց ապահով ըլլալու թէ աւելի հանդիսա պիտի գմնեմ քեզի :

— Ուրիշ Մանօնը տեսամք , պատասխանեցի հառաչելով : Բա՛րէ , գուն իզմէ աւելի երջանիկ ես , վասն զի ես դատապարտած առանց տրիշ տեղի կութիւն մ'առնելու : Հոն իմացայ գէպրդ և այն զարհուրանքը զօր քեզ պատճառած էր այն բայց չուզեցի աեմնուիլ հետդ առանց ապահով ըլլալու թէ աւելի հանդիսա պիտի գմնեմ քեզի :

Թիվերժ յանդիմանեց զիս այս հառաչումիս համար , որ տակաւին Մանօնին նկատմամբ տկարութիւնս կը յայսնէր : Այնքան ձարպիւ կութեամբ ըլլալեց զիս բնաւորութեանս և միտումներուս լւառութեան նկատմամբ որ իրեն պէտ գարուս ամեն զրոսանց հրաժեշտ տալու և եկեղեցական ըլլալու սաստիկ փափաք մը ներջնչեց ինձ իր այս առջի այցելութենէն սկսելով :

Այնքան ախրժեցայ այս գաղափարէն սր՝ երբ մինակ մնացի՝ ա՛լ ուրիշ բանի չըլլալեցայ : Յիշեցի Ամիւնիկ զերապատիւ եպիսկոպոսին խօսքերը , որ մի և նոյն խրատը տուած էր ինձ , միտքս բերի նաև այն բարենշան դուշակութիւնները զօր ան ըրած էր ի նպաստ իմ : Իթէ երբէք ուղէի կրօնաւոր ըլլալ : « Նկատումներուս հետ խառնը բեցաւ նաև բարեպատշութիւնը :

« Խորիսմութեամբ և քրիստոնէապէս պիտի ապրիմ , կըսէի . ու բումին և կրօնքին պիտի զսաղիմ որք չպիտի թողան զիս սիրոյ վոտան :

դաւոր հաճոյիլը վրայ խորհելու : Պիտի արհամարչեմ ինչ որ հաշարակ մարգերու զարմանքը կը զրաւէ , և որովհետեւ բաւական կըզա գտմ թէ սիրաս պիտի փափաքի ինչ որ կը յարդէ , հնչնուքս , ինչ պիտի նաև փափաքներս նուազ պիտի ըլլան :

Ասոր վրայ խալազ և մենական կեանքի դրութիւն մը կ աղմեցի : Այս գրութեան մէջ կը գնէի մեկուսի տուն մը՝ պղոտիկ անտառի և պարտէզին ծայրն ամուշ ջուրի առուակի մը հետ . ընարի դիրքերէ բաղկացեալ գրատուն մը , քանի մ'առաքինի և ուշիմ բարեկամմեր . մաքուր բաց սալշաւաչաց և չափաւոր սեղան մը : Կուղէի նաև գը ըալցութիւն հաստատել բարիզաբնակ բարեկամի մը հետ որ քառ դաբական լուրերը պիտի իմացնէր ինձ ոչ այնքան հետաքրքրութիւն զո՞չ լնելու որքան մարդերուն յիմարական շարժումները ինձ զրոսանք մ'ընելու համար :

— Երջանիկ պիտի չըլլամ , կը շարայարէի , ամեն կամքերս կատարուած պիտի չըլլան :

Իրաւ է որ այս նպաստակը սաստիկ կողըքէր յօժարութիւններս : Բայց այսքան խօհեմ կարդադըութիւնէ մ'ետք կղզայի թէ սիրտս ուստիշ բանի մ'ալ կսպասէր , և թէ բոլլրովին զմայելի առանձտութեան մը մէջ բանի մը չփափաքելու համար պէտք էր Մանօնին հետ ըլլալ :

Սակայն Թիվերժ կը շարունակէր իր յաճախ այցելութիւնները զիս խրախուսելու համար այն նպաստակիս մէջ զոր ներշնչած էր ինձ Կոփթ գտայ այս բանի վրայ հօրս բացուելու :

Հայրս յայսնեց թէ իր զիստառութիւնն էր զաւակները աղաս թողուլ ընտրելու իրենց վիճակը , և թէ ինչ կերպով որ ուղէի շարժիլ ինքնին ինձ վիճակ մ'ընտրելու համար , իր խրաններովն ինձ օգնելու իրաւունքը միայն կը պահէր իրեն :

Իրօք շատ հանձարեղ խրաններ առւաւ որք նպաստակս աւելի ճամանաշումով առջև տանելու կը դրդէն զիս քան թէ այս մասին յօշարութիւնս բառնալու :

Դպրոցական նոր տարին կը մեցնար : Թիվերժին հետ խօսք ըլլիք միասին Սէն-Սիւլիսի կլերանոցը մասնելու , որպէս զի ան իր պատուածաբանական ուսումներն աւարտէ , ես ալ իմիններս սկսիմ :

Թեմին եպիսկոպոսը՝ Ճանչելով Թիսկերժին արժանիքը՝ հասատու աւ բագութիւն մը տուաւ անոր մեր մեխելէն առաջ :

Հայրու կարծելով թէ բոլորովին մարեր է բուան սիրոյս կրակը՝ առանց ամենելին գժուարութիւն մը ցուցընելու թող տուաւ որ մեկ նիւթ :

Բարիկ հասանք : Եկեղեցականի զղեստը Մալթայի խաչին , Տէ Կրիէօ արաս անունն ալ Տէ Կրիէօ ասսպետին յաջորդեց : Անբան ջանաբրութեամբ ուսում առնելու ետեկն ընկայ որ քանի մ' ամփառան մէջ կարգէ գուրս յառաջդիմութիւններ ըրի : Գիշերուան մէկ մասն ալ ուսումնս կը տայի , ինչ օրուան և ոչ մէկ վայրկեանը կը կորուէի :

Ճամբաւս այնքան հուշակուեցաւ որ արդէն կը չնորհաւորէին զիս այն աւագութեանց վրայ որոնց հարկաւ պիտի հասնէի , և անունս հասատու աւագութեանց \* ( bénéfice ) տէպին անցաւ առ անց իմ կողմէ իննդրուած ըլլալու : Բարեպաշտութիւնն ալ զանց չէր ըլլար , ամեն կրօնական պարտականութիւններս ջերմուանդութեամբ կը կատարէի : Թիսկերժ կը հճռէի կրած փափոխութենէս զոր իր ձեռաւ գործը կը սեպէր , և բազմից տեսայ որ արցոնք կը թափէր պարածանք մը համարելով իրեն ինչ որ դարձս կանուանէր ինք :

Իրաւ է որ մարդկային որոշու մերեն ենթակայ են փոխուելու , փոփոխութիւն որ երբէք զարմանք պատճառած չէ . կիրք մը ծնունդ կը տայ մարդուս որոշակներուն , ուրիշ կիրք մ'ալ կրնայ ջնջել զանոնք , բայց երբ միաբն կը բերեմ թէ ո՛ւրան սրբազն էին իմին ներս , որք Սէն-Սիւլիս տարեր էին զիս , և այն ներքին ուրաւ խութիւնը զոր երկնից չնորհիւ հոն կը վայելէի՝ իմ այն որոշում ներս գործադրելու ատեն , կահարելիմ այն դիւրութիւնն որով կը յայ ջնջել զանոնք : Եթէ սասոյդ է թէ երկնային օգնութիւններն ամեն բոսկ՝ համազօր են կրից հետ , թող բացատրեն ուրեմն ինձ թէ մարդս ինչպիսի բնական աղետալի միտումէ մը յանկարծ յափշ

\*Bénéfice բառը հոս եկանուա հունեցող եկեղեցական , պարիս , առաջնան , առաջնութիւն նշանակեցով յարմար դասեցինք հասատու պարգութիւն թարգմանել :

տակուելով կը հեռանայ իր պարտաւորութիւնէն , առանց ամենամա փոքր գիմադրութեան մը կարող զանուելու և առանց ամենափոքր խղճառանջութիւն մը զդալու :

Կը կարծէի թէ սիրոյ տկարութիւններէն բոլորովին ազատած եմ : Կը թուէր ինձ թէ Սուրբ Օգոստիամսի զրբէն երես մը կարգալը , կամ քառորդ մը քրիստոնէաբար խօկալը նախազատիւ կը սեպէի զգայութեանց ամեն հեշտութիւններէն , առանց ՚ի բաց թողուն նաև այն հեշտութիւններն որք կրնային Մանսէն նուիրուիլ ինձ : Սա կայն անսուհ վայրկեան մը վերսին անդունդը զլրեց զիս , և ան կրումն ևս աւելի անդարմանելի եղաւ , վասն զի յանկարծ զանուելով Ճիշտ այն խորութեան աստիճանն՝ ուսկէ ելեր էի՛ ևս աւելի անդունդին յատակը քշուեցայ նորանոր անկարգութիւններէն որոնց մէջ ընկայ :

Տարիի մը չափ Բարիկի մէջ բնակէր էի առանց տեղեկութիւն առնելու Մանսէն զործերուն վրայ : Առջի բերան շատ գժուարութիւն կրեր էի այսպէս զսպուելու համար , սակայն թիսկերժին յարահաս խրաններուն և իմ սեպհական խորհրդածութիւններուս զանորհիւ յաղթանակը տարեր էի : Վերջին ամիսներն այնքան հանգարատօրէն անցեր էին որ կը կարծէի թէ այն չնորհալի և սիրանենպ արարածը յաւիտենապէս մոռնալու կետին հատեր եմ : Եկատ այն ժամանակն ուր կը պարտաւորէի աստուածարանութեան դպրուցին մէջ հրապարական բանախօսերու . շատ ակնածելի անձերու աշաջեցի որ իրենց ներկայութեամբը պատուեն զիս : Այսպէս անունպ Բարիկի ամեն թաղերու մէջ տարածուեցաւ , և մինչև դրուժնիս աւկանջը հասաւ : Մանսն ստուգապէս ձձանչեց անունս , վասն զի առ բասի տիտղոսը կը կրէր այն . սակայն հետաքրքրութեան մնացորդէ մը , կամ զիս մասնած ըլլալուն համար զիղէ մը (այս երկու զդայմանց ո՛րն ըլլալը չափացայ երբէր) գրգուելով կարեորութիւն տուաւ առնունի մ'որ այնքան կը նմանէր իմինիս , և Սորպան եկաւ ուրիշ քառնի մը կիմերու հետ : Ներկայ եղաւ բանախօսութեանս , և անշուշտ ոչ այնքան դժուարութեամբ ճանչեց զիս :

Ամենելին չիմացայ այս այցելութիւնը : Յայտնի է թէ այն տեղերը կանանց համար մասնաւոր խուցեր կամ ուր անոնք վանդակի մը

Էտել կը պահուին : «Նորէն Սէհ-Սիւլիս գացի վաստքով համակռած և շնորհաւորութիւններով բերնաւորուած : Երեկոյեան ժամը վեցն էր : Գեռ վայրիեան մ'առաջ եկեր էի կղերանոցն և աչա եկան ըսին ինձ թէ կին մը կուզէր խօսիլ հետո : Խօսարանը գացի անմիջապէս :

Աստուած իմ, ի՞նչ զարմանալի երեւում : Մանօնը գտայ հնն : Մանօն ինքն էր, բայց զինքն այսքան սիրուն և փողփողուն չտեսեր էի բնաւ : Տամանութ տարիելան հասակը մասած էր, իր չքնաղ հըշ բապոյները կը գերանցէին այն ամեն գեղեցկութիւնները որք կրնան նկարագրութ, կարի՛ քնքուշ, քաղցը և հրապուրելի հով մը, բռն միրոյ հովա կար իր վրան : Իր բոլոր կերպարանը հմայական երեսի մ'եղաւ ինձ :

Տեսքէն շուարեցայ մնացի, և չկրնալով ենթադրել թէ ի՞նչ էր այս այցելութեան նպատակը, ակնիոր և երերուն կսպասէիոյացտանէ իր միտքը : Ժամանակ մ'իր շփոթն իմինիս հաւասարեցաւ . բայց տեմնելով լուսութեանս շարունակութիւնը, ձեռքն աշերուն առջել դրաւ քանի մ'արցունք պահելու համար : Վէհերու ձայնով մ'ըստաւ ինձ թէ իր անհաւատամութեամբն ատելութեան արժանի ըլլ լալու կը խօսառվանի, թէ սակայն եթէ իրաւ էր իր վրայ սէր մը ունեցած ըլլալը, ես ալ շատ խստի վարուեր էի երկու տարի մնացունելով՝ վիճակս առանց իմաննելու իրեն, և թէ ես աւելի խրստութիւն կը ցուցնէի առանց խօսք մ'ըսելու իմ առջև տեսնելով զինքն այն վիճակին մէջ ուր էր ինք :

Զինար մեկնուիլ այն վրդովումը զոր հոգիս կը կրէր մտիլ ընելու ատեն :

Մանօն նստաւ : Ես ոսքի վրայ կեցայ, մարմինովս կիսովին դարձած, և չշամարձակելով ուղղակի անոր նայելու : Բաղմիցս պատասխան մը սկսայ առանց աւարտել կարենալու, վերջապէս ջանք մ'ընելով գոչեցի ցաւագին :

—Նենդառո՛ր Մանօն : Ա՛չ, նենդառո՛ր, նենդառո՛ր :

Զերմագին արցունք թափելով կրնեց թէ չէր ուզեր երբէք իր նենդառութիւնը արդարացնել :

—Ի՞նչ կուզես ուրեմն, զոչեցի դարձեալ :

—Մեռնիլ, պատասխանեց, եթէ նորէն չտաս ինձ սիրտդ առանց որու անկարելի է ինձ ապրիւ :

—Կեա՛նքս ուղէ ուրեմն, գրուժա՛ն, կրիսեցի՝ ես ալ արտառք թափելով զոր ՚ի նանիր կը ջանացի զսպելու . ուղէ՛ կեանքս, որ մէ ՚ի զատ ունի ունիմ քեզ զոհելու, վասն զի սիրաս երբէք չը դադրեցաւ քուկդ ըլլալէ :

Հաղիւ արտաքերեր էի այս վերջին խօսքերը, և աչա եռանդան դին ուրախութեամբ մ'որք ելաւ քովս զալու և զիս սրադնելու հաջ մար : Բիւր տրփագին դգտումներով շոյեց զիս, սիրոյ հնարած աւմնի անունները տուաւ ինձ իր ամենաբռուան խանդաղատանքը արտացայտելու համար : Տակաւին թուլութեամբ կը պատասխանէի առ նոնց : Իրօք որքա՞ն յանկարծակի կանցնէի համդարս վիճակէ՛ս ուր դտնուած էի, գէս այն աղմկալի զգացումներն որոնց վերածնիլը զգացի . կը զարհութէի այս անցքէն, կը սարաւէի իրը այնպիսի մարդ մ'որ գիշերով մեկուսի գաշախ մը վրայ կը զմնուի . կը կարծես թէ իրերու նոր կացութեան մը մէջ փոխադրուած ես, այս կացութեան մէջ կը գրաւուիս գաղտնի սարսափով մ'որմէ բոլոր շրջականները երակար ատեն գիտելէն ետք միայն կը սթափիս :

Քով քովի նստանք : Մանօնին ձեռններուս մէջն առի :

—Ա՛խ, Մանօն, ըսի արտապէս իրեն նայելով, չէի յուսար այն ուե մասնութիւնը որով փոխարինեցիր սէրս : Գիւրին էր քեզ խարել սիրու մ'որու բացարձակ թագուհին էիր, և որու բոլը երածանկութիւնն էր քեզ հաճելի ըլլալ և հնագանդիլ : Ըսէ՛ հիմա նայիմ, մի՞թէ իմինիս չափ սիրաւէս և հլու սիրու մը դտար : Ձէ՛, չէ՛, բնութիւնն իմ սրափի պէս սիրաւեր շատ չստեղծեր . ըսէ՛ ինձ գէթ թէ արգեօք երբեմնակի ցաւեցա՞ր անոր վրայ : Ի՞նչ հաւատ կը պարտաւորիմ ընծայել այդ բարեսիրական դարձին որ այսօր քեզի ետ կը բերէ սիրոս միմիթարելու համար : Քաջ կը տեմնեմ որ առաջուանէ աւելի սիրուն ես, բայց յանուն այն ամեն չարչարանց զոր քեզի համար կրեցի, գեղանի Մանօն, ըսէ՛ թէ ա՛լ հաւատարիմ պիտի ըլլամս :

Իր զոջումին վրայ այնքան սրտառուչ բաներ ըստ, և այնքան երաշխաւորութիւններով և երգումներով խօսք տուաւ հաւատարիմ ընալու որ անմինելի կերպով արդահատանքս շարժեց :

Սիրելի Մանօն, ըսի պրաբոյր և աստուածաբանական խօսքեցու սրբապիղծ խանութովով մը, ոչ ոք արժանի է քեզի պաշտելու: Կզզամ թէ սիրոս յաղթական բերկութենէ մը կը յափշասակուի: Յնորք են այն ամեն բաներն որք աշատութեան վրայ կըսուին Սէն-Սիւլիսի մէջ: Այժմէն քաջ զիսեմ թէ հարասութիւնս և համբաւս պիտի կորուսեմ քեզի համար: Ճակատաղիրս գեղափող փող աչերուդ մէջ կը կարդամ, բայց կայ կորուստ մ'որու փոխարէնը չպահեմ միրոյդ մէջ: Բազդին բարիքը չյուղեր զիս: Փառքը շողի մը կերեայ ինձ: Եկեղեցական կեանքի ամեն նախապակներս ան հեղեղ երեակայութիւններ էին: Վերջապէս այն ամեն բարիքն՝ որ քեզմէ յուսացածէս կը տարբերի՝ ողորմելի բարիք է, վասն զիստիս մէջ չկմնար և ոչ իսկ վայրկեան մը դիմանալ մէկ նայուածքիդ:

Սակայն իր ամեն յանսանքները մուշնալու խօսք տալով ուզեցի հասկալ թէ ինչ կերպով հաւաներ էր Պ...էն հրապուրուելու: Մանօն իմացուց ինձ թէ Պ... զինքը պատուհանը տեմնելով տրիօւրէն սիրահարած էր իրմէն: Թէ սէրը յայտնած էր իր ընդհանուր վարձակալ, այսինքն նամակի մը մէջ յայտնելով թէ վը ճարռումը շնորհւամներուն համեմատ պիտի ըլլաց, թէ առջի բերան անձնատուր եղած էր, բայց միայն մէկ նախատիոյ որ էր մեզի տեսիլ հանգստապէս ապրեցնելու բառող մեծ գումար մ'առնուլ Պ...էն, բայց ասի այնպիսի շքեղ խոստումներով շլացուցեր էր զինքն որ հաւաներ էր աստիճանաբար գդրուելու: Թէ սակայն կը պարտաւորէի երեակայել իր խղճին տադնապները այն վշտէն որոնց վկայութիւնները ցոյց տուած էր ինձ մեր բաժանումն առջի օրը: թէ Պ... թէ շքեղ հոգասիրութիւն ունեցած էր իր վրայ, սակայն ինքն անոր հետ երջանկութիւն չլայելած էր: ոչ միայն վասն զի այս շքեղ հոգասիրութեան մէջը չէր զաներ իմ քնքուշ զդացումներս և հաճոյական կերպերս, այլ նաև վասն զի իր սիրու սիրոս յիշատակն և իր մատնութեան տապնապները կը կըէր ներքնապէս նոյն խոկ այն զրուանաց մէջ զոր Պ... մնջնդաշատ կը հայթայթէր իրեն:

Մանօն թիւպերին խօսքն ալ բայաւ և ըսաւ ինձ այն սաստիկ զփոթը զըր իրեն պատճառած էր անոր այցելութիւնը:

Նթէ սուր մը մխուած ըլլար սիրոս, շարայարեց Մանօն ոչ այնքան պիտի զրգուէր արիւնս: Կոնակս անոր դարձոցի չկրնաւ լով վայրկեան մը դիմանալ իր ներկայութեան:»

Շարունակելով խօսքը Մանօն պատմեց ինձ թէ ինչ միջոյներով իմացած էր Քարիզի մէջ բնակիլս, վիճակիս փոփոխութիւնը և Սորպոնի մէջ ընելու բանախօսութիւններս:

Հաւատեցեց ինձ թէ վիճաբանութեան միջոյն սաստիկ յուզուած և հետեւաբար մեծ գժուարութեամբ կրցած էր զսպել ոչ միայն իր արցունքը, այլ նաև իր հաւաչումներն և աղաղակներն որք երևան ենելու կետին հասեր էին բազմից: Վերջապէս ըսաւ թէ ամենէն ետք դուրս ելած էր Սորպոնէն իր վրովումը չյայտնելու համար: և թէ միայն իր սրտի շարժումին և փափաքներուն սաստիկութեանը հետեւելով կը բարանոցն եկած էր հոն մեռնելու որոշումով եթէ զիս իր մատնութեանը ներելու տրամադիր չզտնէր:

Ուր կրնայ գանոսիլ բարբարոս մ'որու գումը շշարժէր այսքան սաստիկ և սիրաբոյր զղումէ մը: Ես այն միջոյն զդայի թէ Մանօնին համար բոլոր քրիստոնէաբնակ երկիրներու եսլիսկոպոսարանները զոհել կուղելի:

Ճարցուցի անոր թէ ինչ կերպով յարմար կը գտամէր նորէն կարդագրել մեր զորձերը: Ըսաւ թէ պէտք էր անմիջապէս ելնել կղերանցոյէն և աւելի ապահով տեղի մը ձգել միր ընելու կարգադրութիւնը: Ճաւանեցայ իր ամեն կամքերուն՝ առանց պատասխանի: Իր կառքը մտաւ երթալու և փողոյն անկիւնն ինձ սպասելու համար: Պահ մ'ետք փախայ՝ առանց նշմարուելու գոնապնէն: Ես ալ Մանօնին կառքը մտայ: Ճնավաճառի մը կրազիր մտանք: Վերստին կրեյի ասպետի ժապաէնները և սուրբը: Մանօն ծախար վճարեց, վամտ զի ստակ մը չունէի, և վախնազով թէ կուցէ Սէն-Սիւլիսիէն ելունելու մասին խոչընդունի կը հանդիսիմ՝ չուզած էր որ պահ մ'ետք դառնամ սենեակ՝ անկիէ ստակս առնելու: համար: Մանաւանդ թէ զանձս բաւական միջակ էր, և Մանօն բաւական հարուստ՝ Պ... ին առատածեռնութեանց շնորհիւ, ուստի կրնար առ ոշնչն սեսկել այն զումարը զոր իս կստիպէր ձգելու: Ճնավաճառին կրազին մէջն իսկ խօսակցեցանը մը ընելու որոշումին վրայ:

Մանօնն ինծի համար կը զոհէր Պ. . . ը , և ուզելով որ տեղի արժէք տամ այս զոհարաւթեան՝ որոշեց ամենափոքր կերպով շակ նածիլ անորմէ :

— Կուղեմ իրեն թաղուլ իր կահ կարասին , ըստ , վասն զի իրն է , սակայն ըստ արդարութեան պիտի առնում այն դոհարեակները և վախուն հազար ֆրանքի մօտ գումարը զոր երկու տարուան մէջ քաղեցի անորմէ : Դմ վրայ ամենն ին իշխանութիւն մը չտուի անոր , շարայարեց Մանօն . հետևաբար կրնանք Բարիզի մէջ բնակիլ աներինիւղ , կոկիլ տուն մը բռնելով ուր երանութեամբ պիտի ապրինք :

Առարկեցի Մանօնին թէ իրեն համար եթէ վսանդ չկար , ինծի համար շատ կար . թէ ական կամ անաղան հարկաւ պիտի ձանչ ցուեի և շարունակ պիտի դսնուէի այն դժբաղդութեան առջև զոր արդէն կրեր էի :

Կերպով մը հանկցուց ինձ թէ ցաւ պիտի զդար Բարիզէն հեռանարովէ : Շատ կը վախիսցի որ ցաւ մը չպատճառեմ Մանօնին , ուստի չկար փանդ մը զոր չարհամարհէի անոր հաճելի ըլլալու համար : Սակայն պատշաճ բարիխառնութիւն մը զանք , որ էր Բարիզի մօտ զիւղի մը մէջ առն մը բռնել , ուստի զիւրին պիտի ըլլար մեղ քաղաքն երթալ եթէ զըստանքը կամ հարգաւորութիւնը պրհանջէր :

Շայեցի զիւղն ընտրեցնիք որ Բարիզէն հեռի չէ : Մանօն անմիջապէս ետ գարձաւ իր տունը : Ես ալ թուիլորի պարտէ զին պլատի գուռը դացի իրեն սպասելու . համար :

Ժամէ մ'ետք եկաւ հասարակաց կառքով մը , հետն ունենալով աղջիկ մ'որ իրեն կը ծառայէր , և քամի մ'արիզներ որմնց մէջ զըստած էր իր զդեստներն և ամեն թանկարին բամերը :

Հուտով հասանք ՚ի Շայե : Առջի դիշերը պանդոլին մէջ բնակեցանք որպէս զի տուն մը կամ դէթ կոկիլ բնակարան մը դմնելու ժամանակ ունենանք , և իրօք հետևեալ օրը մէր յօժարութեան հաւմատ տուն մը գտանք :

Երանութիւնս առջի բերան անդորդնելի կերպով հաստատուած եւ բեցաւ ինձ : Մանօն հեղութիւնն և կամակարութիւնն էր իսկ : Այս

քան քնիուշ կերպիրով կը մեծարէր զիս որ կարծեցի թէ վիշտերուած հաստոցումը լիուլի առի : Եւ որովհետեւ երկուքնիս ալ փորր ինչ փորաձաւութիւն ստայեր էինք , մեր հարստութեան հաստատութեան վլայ պատճառաբանեցինք : Վաթսուն հազար ֆրանքը , որով կը բաղկանար մեր հարստութիւնը , երկարան կեանքի մը չափ զիսմանալու գումար մը չէր : Մանօնամոդ թէ մեր ծախսին դուռը շատ նեղցնելու տրամադրութիւն չունէ ինք : Խնայողութիւնը Մանօնին , ինչպէս նաև իմ առաջնորդ առաջեցնութիւնը չէր :

Ահա ըսեմ յառաջադրած նպատակն ։

— Վաթսուն հազար ֆրանքը կրնայ տամը տարի ապրեցնել մեռ զի : Տարին վեցը հազար ֆրանք պիտի բաւէ մեզ եթէ Շայեօյն մէջ շարունակնիք ապրիլը : Հոն պարկեշան բայց պարզ կեանք մը պիտի վարենք : Մեր միակ ծախսը պիտի ըլլայ կատք մը պահել և թատրոններն երթալ : Այս մասին կարգադրութիւն պիտի ընենք : Օքերան կը սիրես , շաբաթն երկու անգամ պիտի երթանք : Խաղի զուարձութեան դարձ այնքան սահմանաւոր կերպով պիտի խաղանք որ մեր կորուստն երբէք քսան ֆրանքէն աւելի չափսի ըլլայ : Տաս սը տարուան մէջ անկարելի է որ փոփոխութիւն մը չպատահի ընս տանեացս մէջ . հայր ծեր է , կրնայ մեռնիլ : Ֆառանդութիւն պիտի ունենանք և անատեն աղաս կը լլանք մեր ամեն միւս երկիրդնեած բէն :

Այս կարգադրութիւնը կենացս ամենէն յիմարական գործողութիւնն եղած չափսի ըլլար , եթէ շարունակ անոր համեմատ ապրելու չափ խոհեմութիւն ունեցած ըլլայինք : Բայց մեր որոշումներն ամիսէ մը աւելի չսեւեցնի : Մանօն զըստանքի վրայ հոդի կը տար , ես ալ իր վրայ : Ամեն բարի ծախսի նորանոր առիթներ կը ներկայաւելին մեր առջև , և ես ոչ միայն չէի ցաւեր այն գումարներուն վրայ զոր երբեմն լիաբուռն կը դործածէր , այլ նաև իրմէն առաջ ես կը հայթայթէի Մանօնին այն ամեն բաները որք ըստ իս կրնայ ին հաճելի ըլլալ անոր : Մեր Շայեօյի ընակարամն իսկ սկսաւ տաղաւուկ ըլլալ անոր :

Զենոը կը մօտէր , ամեն մարդ նորէն քաղաքը կերթար , և զիւղն ամսցի կը գառնար : Մանօն յառաջարկեց ինձ Բարիզի մէջ վերըս

տուն տուն մը բւնել։ Զհաւանեցայ առաջարկութեանը՝ բայց զի՞նքը փոքր ինչ գոհ ընելու համար ըստ թէ կրնայինք կահաւոր սենեակ մը վարձել և դիշելները հնա մնալ եթէ երբեմնակի պարտաւորէ ինք ուշ ենել այս ժողովէն ուր շաբաթուան մէջ շատ անդամ կերա թոյինք, վասն զի Մանօն այնքան ուշ ջայեր վերագանձալու անհամապտութիւնը պատրուակ կը բոնէր՝ այս դիւզը ձգել ուղելու համար։ Նյապէս երկու բնակարան ունեցանք, մին քաղքին և միւսը կիւղն մէջ։ Այս փոխութիւնը շուտով մեր դործերը բոլորովն աւրեց ծնունդ տալով երկու դէսքի որք մեր կործանումն պատճառ եղան։

Մանօն եղանակ մ'ունէր որ պահնորդ էր։ Դժբաղդաբար ան աշխարիլի մէջ կը բնակիէր ճիշդ այն փողոցն ուր էինք մենք։ Ճանաչեց իր քոյրը՝ առտու պատուհանը տենելով զան, և անմիջապէս վաղեց մեր տունն եկաւ։ Կոչու և պատոյ սկզբունքէ զուրկ մարդ մ'էր ան։ Մեր սենեակը մտաւ ստոկալի հայհսութիւններ ընելով։ Երբ որովհետեւ իր քրոջ դէսքերուն մէկ մասը զիտէր, բիւր թշնամնը և յանդիմանութիւններ ըրաւ անոր։

Վայրկեան մ'առաջ դուրս ելոր էի, ելած ըլլալս անշուշտ բարեբաղդութիւն մ'եղաւ ինձի կամ իրեն համար, վասն զի ամեննեին տրամադրութիւն չանէի այնպիսի նախատինք մը կրելու։ Ետդարձայ մեր տունն երբ արդէն մեկնած էր ան։ Մանօնին տրտութիւնը տեսնելով երեակայեցի թէ կարդէ դուրս բան մ'անցած էր։ Պատամաց ինձ այն ամախորդ իրողութիւնը որու պահ մ'առաջ ենթարկը ւած էր, նաև իր եղորը տմարդի սպառնալիքը։ Այնքան զայրայաց որ անմիջապէս պիտի վազէի վրէմս լուծելու համար եթէ Մանօն արտսուբովն արդիլած չըլլար զի։

Մինչդեռ հետը կը խօսէի այս իրազութեան վրայ, պահնորդը առանց իմայնել տալու իր գալուստը՝ մտաւ այն սենեակն ուր նըստ տեր եինք մենք։ Եթէ ճանչած ըլլայի զինքը, պիտի չընդունէի այն քաղաքալարութեամբ զըր ցոյցուցի իրեն։ Բայց զուարժ կերպար բանքով մը մեղի բարեւ տալուն ետք՝ ժամանակ ունեցաւ ըսելու Մանօնին թէ եկած է ներումն ինդրելու իր բարկութեամբ համար, թէ դինքն անառակութեան մէջ կարծած էր և այս կարծին ունենաւ

լուն պատճառաւ բարկութիւնը զրդուած էր։ թէ սակայն մեր ծառուաներուն մէկէն ո՛վ ըլլալս իմացած և իմ վրայ իվաս նպաստառ տեղեկաւթիւններ առած ըլլալով՝ անոնք մեր հետ աղէ կ ասլրելու փափաք կը տային իրեն։

Թէկ և անհեղեղ և անախարժ բան մ'էր Մանօնին եղածը սպասաւ ւորներուն մէկէն այսպէս տեղեկաւթիւն առնելու, սակայն պարկեշտութեամբ ընդունեցայ իր քաղաքավարական խօսքը՝ կարծելով թէ դոհի պիտի ընելմ իր քոյրը։ Մանօն ուրախ կերեար՝ եղայրը հաշտուելու տրամադրի տեսնելով։ Մեր հետը հաշելու համար չընդուն ցինք որ երթայ ան։

Քանի մը վայրկենի մէջ այնքան բնասանի եղանակ գառան մասին մեր խօսիլը լսելով բացարձակապէս ուղեց ընկերանալ մեզ։ Հարկ եղաւ աեղ մը տալ իրեն մեր կառքին մէջ։ Մեզի հետ տան տէր մ'եղաւ ան, վասն զի շատ մը սովորեցաւ այնքան մէծ հաճութեամբ մեզի տեսնելու որ մեր տունն իրն ըրաւ և կերպիւ իւիք տէր եղաւ այն ամեն իրերու որք մերն էին։ Եղբայր կանուանէր գիս, և եղբայրական համարձակութեան պատրուակով իր ամեն բարեկամները մեր Շայեցի տունը քերելու և մեր ստակալ անոնց հացարոյթ տալու սովորութիւնը ստացաւ։ Շաբեզ զի եան կարծից մեզ վճարել տալով։ Կաև պիտից մեզի որ իր ամեն պարտը ըստ վճարեն։

Մանօնին անհաճոյ չերեալու համար աչք կը զոյէի այս բանառութեան վրայ, մինչեւ անդամ կարծել տալով թէ չէի նշմարեք ժամանակ առ ժամանակ Մանօնէն մէծկակ զումարներ քաղելը։ Իւրաւ է որ ժարպիկ խաղամուլ մ'ըլլալով այն զումարներուն մէկ մասը ետ տալու հաւատարմութիւնը կընէր երբ բաղդը յաջող կերպար խաղին մէջ, բայց մեր գրամական վճակը խիստ միջակ ըլլալով չէինք կընար երկար ատեն զիմնանալ իր զրիթէ անշափ ծախս սերուն։

Իր ժամանակութիւններէն աղատելու համար հետ աղդու և բայցորչ կերպով խօսելու կէտին հասեր էի երբ աղետալի զիսպուած մը խըս նայեց մեզ այս ցաւը՝ ուրիշ պատճառակով որ անդարձաննելի կերպով կարծանեց մեզի։

Օր մը Բարիկ մնացեր էինք հմա պատկելու համար , ինչպէս շատ անդամ՝ կը պատահէր մեզ այս բանը : Սպասուհին , որ անանկ պարագաներու մէջ մնակ կը մնար Շայեօյի զիւղը , առանու եկաւ իւմացոյ ինձ թէ զիշերը կրակ ելած էր սունէս և թէ շատ դժուար էրցեր էին մարել Հրդեշը :

Հարցոցի թէ մէր կարասիներուն վնաս մ'եղած էր . պատասխանց թէ օդութեան հասող բազմաթիւ օտարականաց պատճառաւ այնքան մեծ շիթթութիւն եղած էր որ չէր կրնար պահհով ըլլար որ և է նկատմամբ :

Դողացի մեր ստակին համար որ արկլիկի մը մէջ պահուած էր Շուտով Շայեօ զայի : Անօդուտ փոթաջանութիւն , վասն զիւրիկին արդէն աներեցի եղած էր :

Էնատեն զջայի թէ մարգս կրնար ստակը սիրել առանց աղոչ ըլլար : Եյս կորուսն այնքան ստամփի վիշտով մը համակեց զիս որ քիչ մնաց ինելքս սփոփի կորսուէի : Աղքատութիւնն այս գժրադդութեանց փոթրագոյնն էր : Կը ճանչէի Մանօնը . արդէն քաջզլացի էի թէ որպան աշ հաւատարիմ ըլլար ինձ և սիրել զիս բարերաստութեան մէջ , պէտք չէր վստահէլ թշուառութեան ժամանակ : Հատ կը սիրեր առատութիւնը և զրուանը , ուստի չէր կրնար ինձ զոհել վստանք : Պիտի զրկուիմ Մանօնէն , զոչեցի խրովի : Դըքզա՞ղ ասպետ , ուրեմն գա՞բձեալ պիտի կորսուես սիրուհիդ :

Եյս գաղափարն այնքան ստոկալի խռովութեամբ մը համակեց զիս որ քանի մը վայրեան տատանեցայ հարցունելով իւրովի թէ արդէն լաւադոյն չէր մահուամբ վերջալամն գժրագոյութիւններուն :

Սակայն բաւական կորալվամտութիւն պահելու շնորհիւն ուղից նախ քննել թէ ամենեին գարման մը չէր մնար ինձ : Երկինք գաղափար մը ծնել տուաւ ինձ , և այս գաղափարին առջեւ յուսահաւատութիւնս կանկ առաւ : Կարծեցի թէ անկարելի չէր ինձ Մանօնէն դադանի պահել մեր կրուար , և թէ հնարագիտութեամբ կամ բարդին ուրիշ մէկ չնորհքովլը կրնայի բաւական պարկեշտութեամբ անոր պիտոյքը հողալով չմողուլ որ Մանօն հարկը զզայ :

Հաշիւ լրի , կըսէի իւրովի միխթարուելու համար , թէ քսան հալար թալենը ասոր տարի պիտի բաւեր մեզ . ենթագրենք թէ ?

Թամբը տարին անցաւ և թէ ընտանեցաց մէջ չպատահէցաւ այն փուփութեամբ մին զըր կը յուսայի : Ինչ որոշում պիտի լնէի թէ նզէկ չզիտակմ . բայց այսօր ո՞վ կրնաց արդիել զիս լընելու ինչ որ անատեն պիտի ուզէի ընել : Բարիկի մէջ կապրին քանի քանի անձեր որք ոչ կմ իւլքս , ոչ բնական յատկա թիւներս ունին , և որք սակայն կապրին իրենց աւելի կամ նուազ տաղանգներուն շնորհէլը :

Նախախնամութիւնը , կը շարայարել խորհելով կինոց այլ և այլ վիճակներուն վրայ , ո՞չ անգամ կարի իմաստութեամբ կարգադրած է իրերը : Նաւականին և հարուստներուն մեծաղոյն մասն ապուշ է , ասի յայնի է որպանց որ փոքր ինչ կը ճանչեն աշխարհչաւ Արդ հիանալի արդարութիւնն ո՞ր կայ այս կարդաղրութեան մէջ : Վնոնք եզմէ հարստութեանց հետ նաև խելք ունենային , շատ երջանիկ , իսկ միւս մարդիկ խախտ թշուառ կըսային : Մարմնոյն և հողին յատկութիւններն այս վերջններուն շնորհուած են իրը թշուառութեանն և աղքատութեանն ապատուելու միջոյներ : Ումանք աւագանին հարստութեանց կը մամակցին անոնց հաճոյիցը ծառայելով . այսինքն միամիտ որսեր կը կազմն անոնցմով , ումանք անոնց կրթութեանը կը առաջին կազմական պարկեշտ անձեր կազմելու անոնցմով . իրաւ է որ խիստ քիչ անդամ կը յաջողին այս մասին , սակայն ստատածային իմաստութեան նապատակն այս չէ . մարմնոյ և հողի յատկութեանց տէր մարդիկ իրենց իմամարկութեանց փոխարէն միշտ արդիւնք մը կը քաղին , որ է ասպրիլ ՚ի վիաս այն անձերու զոր կը կրթեն . և հարուստներուն ու աւագանին ապշտութիւնը ինչ կերպարվ ալ գործածուլ եկամուար պատամիան աղջիւը մէկ պղտիներուն համար :

Եյս խորհրդածութիւնները փոքր ինչ հանգարանեցին սիրոս և միաբար : Արոշեցի նախ երթալ և խորհրդակցիլ Մանօնին եղարքը Պ. Լեսօյին հետ : Նաի կատարելապէս կը ճանչէր Բարիկը , և շատ անիթեան ունեցեր էի նշմարելու թէ իր ամենէն որոշ եկամուտին աղջիւը ոչ իր դոյրն էր , ոչ ալ թագաւորէն առած ամսականը : Հազիւ տասը անիթ մնացած էր , ոք բարեբաղգալար զըրպանիս մէջ զանտեր էին : Քսակի Պ. Լեսօյին ցուցոցի զըր-

բազգութիւնս և վախերս բացատրելով, և հարցույի անոր թէ անհաջող մեռնելէ կամ յուսահատաքար դլուխս ջախջախելէ ՚ի զատ ընտրելու միջոց մը կա՞ր ինձի համար :

Պատասխան տուաւ թէ ինքն իր դլուխսը ջախջախելն ասկուշներուն դարձնան է, իտի անօթի մուռնելու մասին ըստ թէ կային շատ մը ինելամի մարդիկ որք նոյնպէս անօթի մնալու վճակին հասեր են երբ չուզեր են գործածել իրենց տաղմաղը . թէ ինձ կը պատկանէր քըննել ի՞նչ բանի կարող ըլլալը և կը խոստանար ամեն ձեւնարկուածիւններու մէջ իր օդնութիւնը և խրաները չխնայել ինձ :

—Ասի շատ անորոշ միջոց մ'է, Պ. Լ. սքօ, ըսի պիտոյքս առ ելի պատրաստ դարձն մը կուզէ, վամն զի ի՞նչ պիտի ըսկեմ Մանօնին :

—Բայց Մանօնին նկատմամբ ի՞նչ բան կը շփոթէ քեզի, կրիսնեց Ռու և գուն մի թէ ձեր նեղութիւններուն վերջ տալու ձարը չունիք միշտ երբ ուղէք : Անոր պէս աղջիկ մը կը պարտաւորի քու, իր և իմ ապառուստը հոգալ :

Պ. Լ. սքօ կորեց պատասխանս որու արժանի էր այս լրտութիւնը և խօսը շարունակելով ըստ ինձ թէ զիշեր չեղած կը խոստանար հաղար թալեռ դմանել և մեր մէջ բաժնել եթէ ուղի հետեւի իր խրատին, թէ զրօնանաց մասին առաւաճեռն իշխան մը կը հանչեր, և ապահով էր թէ ամենայն դիւրութեամբ հաղար թաղեռ պիտի տար ան Մանօնին պէս աղջիկի մը շնորհը ստանալու համար :

Կեցույի Պ. Լ. սքօն :

—Քու վաս լաւաղոյն դաղավար ունի ։ պատասխանեցի . երեւակայեր էի թէ քարեկամութիւնդ ինձ շնորհելուդ պատճառը ըզչ գացում մ'էր բաղրութիւնն ներհակ այն զգացումն զոր ունիս արդ :

Անամօթաքար խոստովանեցաւ թէ միշտ այս եղած էր իր զգացումը, թէ քոյրն ալ իր սեռին օրէնքը բունաբարած էր՝ իրաւ և թէ այն մարդուն համար զոր ինք ամենն շատ կը սիրէր, և թէ Մանօնին հետ հաշուած ըլլալուն պատճառն էր անոր յուրի վարմուաքէն օգուտ քաղելու յոյը :

Գիւրաւ համայսյա թէ մինչեւ անատեն միամտապէս խարուեր էինք

Պ. Լ. սքօյէն : Այս խօսքերը թէ եւ յաւզում մը պատճառեցին ինձ սակայն իրմէ հարկաւորութիւն ունենալուս համար ստիպուեցայ խընդարով պատասխանելու թէ իր խրատը յետին դարձնան մ'էր զար պէտք էր ծայրայել նեղութիւնն ժամանակի թողույթ : Աղաւեցի որ ուրիշ համբաց մը ցուցնէ ինձ :

Առաջարկեց որ պատեհ առիթ մը սեպելով երխաւասրդութիւնս և բարեյաջող գէմքս, զոր ընդունելու էի բնութենէն, միրային յարարելութիւն հաստատեմ պատաւ և առաւասմիրա կնոջ մը հետ :

Այս միջոցն ալ ջախորժեցայ, վասն զի Մանօնին վրայ ունեցած սէրս նեղուած պիտի ըլլայի անուլ :

Խալին վրայ խօսեցայ՝ իրը ամենէն պիւրին և կացութեանս ամեն նէն յարմար միջոցը սեպելով զայն : Ըստ թէ խալը ստուդիու գարաման մ'էր, թէ սակայն բացատրութիւնն կարօս էր այն . թէ պարզապէս հասարակ յասերագլ խաղալու ձեռնարկելու բոլորովին կարծանուելուս ճշմարիտ միջոցն էր . թէ խիստ վտանգաւոր արհեստ մ'էր առանձին և առանց պաշտպանուելու գործածել ուղելն այն պատի միջոցները զոր յաջուշակ մարդ մը կը զործածէ բաղդր սրբազնութիւն համար . թէ ուրիշ միջոց մը կար որ էր խաղացողներու ընկերութիւնն միջոցը . թէ սակայն երիտասարդութիւնն ապատաւ կը վախնար որ պարսն դաշնակիցները տակաւին պիտի չդանէին իմ վրայ այն յատկութիւններն որք գաշնակցութեան սեպհական են :

Սակայն խոստացաւ պաշտպանել զիս աննաց քով, և ասկից ի դաստիարակեց քիչ մը ստակ աալ ինձ եթէ հարկաւորութիւն ունենայի . այսպիսի առաջարկութիւն մը չէի յուսար իրմէն : Միայն մէկ շնորհը խնդրեցի Պ. Լ. սքօյէն այս պարագաներուն մէջ, այս սինկն ամեններն բան մը չիմայնել Մանօնին ըրած կորուսիս և մեր խօսակցութեան առարկային վրայ :

Դուրս ելայ իր տունէն ոչ այնքան զոհ՝ որքան էի երբ ներս մտեր էի . զղայի անդամ դաղսնիքս անոր իմացուցած ըլլալուս համար : Պ. Լ. սքօ ինձի համար ըրած չէր բան մը զոր ես ինքնին չը կարենայի ընել՝ առանց զաղանիքս իրեն յայտնելու . և սաստիկ վախցայ որ Մանօնին ամեննին բան մը չըսելու համար ինձ առաջ

խոսումը չուտե՞ւ : Եր յայտնած զգացումները պատճառ տուեր էին ինձ հաեւ վախնալու որ ամ՝ ինչպէս ինքն բասծ էր՝ Ամանօնէն օգուտ քաղելու նոդասակը չկապմէ՝ քայրն իզմէ՝ յափշտակելով, կամ դէթ իրաստ տալով անոր որ թողու զիս աւելի հարուստ և բարերադդ սիրողի մը յարելու համար :

Այս բանիս վրայ հապար ու մէկ խորհրդածութիւններ ըրի, ուրնց հետեւանքն եղաւ չարչարել զիս և նորոգել այն յուստհատութիւնը որով համակտեր էի առաջու : Բամիցյա միտք ըրի նամակ դըրել հօրս և վերստին զգաստութեան ձամբան մասծ ըլլալս ձեացընել՝ իրմէ դրամական օգնութիւն մը տանալու համար, բայց շուտով յիշեցի թէ իր բոլոր բարեսիրութեամբը հանդերձ առաջին յանցանքիս համար վեց ամիս նեղ բանափ մը մէջ պահած էր զիս . ուստի ապահով էի թէ շատ աւելի խստութեամբ պիտի վարուեր հետս այն շշուկէն ետք զոր պատճառած էր անշռւշա Սէն-Յիւլին մէն փախչիլս :

Աւերջապէս խորհուրդներու այս շփոթութենէն ուրիշ խորհուրդ մարտագրաւելով յանկարծ համարաց միաբար բոլորովին, և զարմացայ թէ ինչու աւելի շուտ չունեցեր էի այս խորհուրդը, որ էր Թիվերթին դիմել . շատ ապահով էի թէ այս բարեկամիս սրախն մէջ մի և նոյն եւանդն ու բարեկամութիւնը պիտի գանէի միշա : Ձիայ բան մ'որ այնքան սքանչելի ըլլայ և պատիս բերէ առաքինութեան որբան այս վասահութիւնն որով կը զիմես իրենց լաւութեամբը կատարելապէս ծանօթ անձերու . կզզաս թէ անվանող է զիմելու, եթէ միշտ շեն կարող օգնելու քեզ, ապահով ես թէ դէթ բարեսիրութիւն և կարեկցութիւն պիտի ցոյցնեն քեզ : Աիրան որ այնքան զդուշութեամբ զոյ կը մնայ միւս ամին մարդերու համար՝ անմանց առջեւ բնականաբար կը բացուի, ինչպէս ծաղիկ մը կը փթթի արեւին լրյուն որուն անոյշ ապկեցութեամը կտակալ կտակաէ միայն :

Այսքան պատիհութեամբ Թիվերթը յիշելս երինային պաշտպանութեան մէկ արդիւնքը սեպեցի, և միտքս զրի զիշեր չեղած զանտեմու միջոցը բնառուել : Անմիջապէս տունը զայի Թիվերթին տոմակ մը դրել գրելու և մեր խօսակցութեան յարմար տեղ մը նշանակեալու համար ; Պատուիրեցի որ լուու և խորհրդապահ կինայ, բայց

ընկ թէ այս պիտի ըլլար ամենակարեւոր աղէկութիւնն ըմբն գոյն պիտի կինար լինել զործերուս վիճակին մէ չ:

Բարեկամն տեսնելու յայուն զգացած ուրախութիւնս ջնջեց վշշատին հետաքը զոր Ամանն անշուշու պիտի նշամբէր Գրեսիս վրայ ։ Սեր Շայեօյի գժբաջլութիւնը Ամանօնին պատմացի իրը չնշին բան մը որմէ չէր պարտաւորէր բնաւ վրկուիլ . և որովհետեւ Բարիզն էր աշխարհիս այն տեղն ուր ամեն տեղէ աւելի հաճելի էր անոր բըն նակիլը, չգծոհնեցաւ երբ ըսի իրեն թէ հարկ էր Բարիզ մնալ մինչ չեւ որ Շայեօյի մէջ լինան քանի մը թեմեւ նորոգումներ որոնց տեղի տուած էր հրկեհը :

Ժամէ մ'եւտք պատասխան առի Յիսկերմէն որ կը խոստանար երաթաւ ուր որ նշանակեր էի : Անհամբերութեամբ հօն վաղեցի : Սահայն կամչնայի երթաւլու երեաւլու բարեկամի մ'առջեն որու ներկայութիւնը միայն կը պարտաւորէր յանդիմանութիւն մ'ըլլալ առաւտակութեանցու դէմ : սակայն իր բարեկրասութեան վրայ ունեցած կարծիքս և Ամանօնին շահը համարձակութիւնս պահեցին :

Աղաչեր էի որ Բալէ-Բուայեալի պարտէ զը գանուի Թիվերթ : Իլչ մէ առաջ հոն էր : Զիս նշամբելուն պէտ եկաւ վարեցաւ ինձ : Երկար ժամնակ զիս իր զիբկը սեղմելով բռնեց, և երեսիս իր արցունքին թըլու իր զդացի :

Ըսի թէ ամշնալով կերեայի իր առջեւ, և թէ ապէ բախտութիւնն սաստիկ կերպով կզզայի սրախ մէջ, թէ կաղերսէի զինքն որ նախ եւ առաջ իմայնէ ինձ թէ տակա ին արտօնութիւն ունէ ի՞ զինքը բարեկամիս սեպելու իր համարումէն ու սէրէն զրկուելու այնքան իրաւամբ արժանի ըլլալէն ետք : Խիսա դորովալի կերպով մը պատասխանեց թէ ոչինչ կրնար զինքն հրաժարեցնել այս բարեկամութենէն . թէ գժբաջլութիւններս յակ, և եթէ կը ներէի որ լսեր՝ յանցանքներս և անկարգութիւններս կրնակամիեր էին իմ վրայ ունեցած սէրը, թէ սակայն այս սիրոյն հետ խունուած էր սաստիկ ցաւ մը, այն ցաւը զոր մարդս սիրելի անձի մը համար կզզայ՝ առանց օգնել կացնալու տեսնելով թէ դէս իր կորուսը կը մօտի ան :

Նստարանի մը վրայ նստանք :

— Բա'քէ, ըսի անոր սրտարուղի հառաջով մը, կարեկթութիւնք

անշուշտ ծայրայեղ է , սիրելիդ իմ թիսկերժ , Եթէ հաւասառին ինձ թէ վեշտը կը հաւասարի այն : Կամնամ ցոցնելու քեզ այս վիշտը , վասն զի կը խստովանիմ թէ անոնց պատճառը փառաւոր չէ , սակայն հետեւանքն այնքան տրամալի է որ նոյն վիշտը և արդաշասանք զգալու համար հարկաւորութիւն չունիս այսքան սիրելու զիս :»

Եբը բարեկամութեան նշան մ'ու զեց որ առանց կեզծելու պատմեմ իրեն այն ամեն իրուզամիները որք պատահեր էին ինձ Աւանիւրիսէն մեկնելու ի վեր : Գոհ ըրի զինքը , և ոչ միայն Ճշմարտութիւնը չայլցլեցի կամ յանցանքներս չթեթեսցի ամեննեին որպես զի աւելի ներելի երեան իրեն , այլ նաև արփազին սիրոյս վրայ խօսեցայ այն ամեն ոյժով զբր կը տար ինձ այս տրիփը : Մասնին վրայ ունեցած սէրս իր առջեւ զբի իբր Ճակատաղըն այն մասնաւոր հարուածներուն մին որ ասիրատի մը կործանումին կը յարի , որու գէմ առաքինութիւնը կարող չէ դիմագրելու , ինչպէս իմաստութիւնը կարող եղած չէր գուշակելու զանոնք : Կենդանի դոյներով նկարագրեցի յուզմանքս , եվկիւներս , այն յուսահատութիւնը որու մէջն էի զինքը տեսնելու երկու ժամ՝ առաջ , նաև այն յուսահատութիւնը որով սիրաի համակուէի իթէ բարեկամներս ալ բաղդին պէս անզթաբար անօղնական ձգէին զիս , վերջապէս թիսկերժին կութն այնքան շարժեցի որ կարեկցութեամբ վշտացա ինչպէս ևս վշտացեր էի յաւերու զգացումնը :

Առանց ձանձրանալու կը համբուրէր և կը յորդուրէր զիս սիրու և միսիթարութիւն առնորու , բայց որովհետեւ կենթագրէր միշտ թէ պէտք էր Անհօնէն բաժնել զիս , պարզապէտ համակցուցի իրեն թէ մնդագրութեանցու մեծագոյնը կը համարէի նոյն խիլ այս բաժանումը և թէ իմ ամեն գժբաղգութիւններէս աւելի անտանելի դարձան մը ընդունելս առաջ ոչ միայն յետին ծայր թշուառութեան , այլ նաև ամենէն անսագործն մահուան համբերելու պատրաստ էի :

— Աւրեմն բայցարէ՛ միտքդ , ըստ թիսկերժ . քանի որ ամեն առաջարկութեանցու կը հակառակիս , ըսէ՛ ինձ թէ ի՞նչ տեսակ օգութիւն կարող եմ ընելու քեզ : »

Ձէի համարձակեր ըսելու թէ իր քսակին հարկաւորութիւն ունէի :

Պահ մը խորհեցայ այս առաջարկութեան վրայ , բայց ամեն կողմէ միայն յուսահատութեան առարկաներ տեսնելով ստուգապէսյուս սահատական որոշում մ'ըրի . այսինքն շնորհակալ եղայ ընկերէս իր ծառայութեանց փոխարէն , և փոխանակ յարձակիլու զինաւորներուն վրայ , որոշեցի հլութեամբ երթալ և աղաշել զանոնք որ ընդունին զիս իրենց խումբին մէջ՝ մինչեւ Հավոր-Տը-Կրաս Մանօնին ընկերուալու և անկէ միասին Նմերիկա երթալու համար ,

—Ամեն մարդ կը մասնէ կամ կը հալածէ զիս , ըսի պաշնորդին , ա՛լ չկայ մարդ մ'որու վրայ կարենամ վստահիլ . ա՛լ բան մը չեմ յուսար ոչ բաղդէն և ոչ մարդերու օգնութենէն : Թըշուառութիւններս կատարեալ են . ա՛լ կը մնայ ինձ հնարանգիլ գրժրագրութեանց : Հետևաբար ա՛լ ամեն յոյս կը կարեմ : Իցի՛ւ թէ երկինք վարձատրէր վեհանձնութիւնդ : Մնամ բարեաւ . կերթամ օգնելու յոտի ճակատագրիս որպէս զի աւարտէ կործանում որու կը դիմեմ կամսվին :

Պաշնորդն ունայն ջանք ըրաւ համովելու համար զիս որ Բարիլ դառնամ : Աղաշեցի զինքն որ թողու զիս հետեւու որոշումներուս և

անմիջապէս հեռանայ քովէս , վասն զի կը վախնայի ոք դուցէ զինաւորները զեռ պիտի կարծէին թէ մննք դիտաւորութիւն ունինք իւրենց վրայ յարձակելու :

Առանձին զինաւորներուն դայի յամրաբար , և երեսս այնքան աշաբեկ էր որ մասնք պարտասորեցան դիտելու թէ վախնալու բան մը չունէր մերձաւորութիւնն : Ասկայն պաշտպանողական դրբի մէջ կը կենային :

—Հանգիստ եղի՞ք , պարմնե՞ր , ըսի՞ մօտելով անոնց . չէ թէ պատերազմելու , այլ շնորհը խնդրելու կը դամ՞ :

Աղաչեցի որ իրենց Ճամբան շարունակեն անկասկած , և քայլերով իմացուցի այս շնորհը զոր կը ինդրէի :

Միասին խորհրդակցեցան դիանալու համար թէ ի՞նչ կերպով կը պարտաւորէին ընդունիլ այս առաջարկութիւնը : Զինաւորներուն պարագլուխը միւսներուն կողմէն խօսելով պատասխանեց թէ խօսիւ պատուէրներ էին իրենց Հսկելու կալանուհիներուն (captive) վրայ . թէ սակայն ես շատ աղլոր մարդ մը կերեայի իրենց , ուստի ինքն և իր ընկերները փոքր ինչ պիտի մեղմէին իրենց պարտաւորութեան խառութիւնը , թէ այսու ամենայնիւ պէտք էր ինձ հասկընալ թէ անոնց այս ընթացքին փոխարէն կը պարտաւորէի դրամական զոհողութիւն մ'ընել : Խօթը կամ ութն ոսկիս մնացած էր . բնականաբար ըսի անոնց թէ որբան էր քսակիս բոլոր պարտնակութիւնը :

—Լա՛ , ըստ զինանդութեամբ պիտի դորձածենք քանիդ : Մէն մի ժամ երեք ֆրանքի պիտի նստի քեզ որպէս զի խօսակցիս այն աղջին հետ որ միւսներէն աւելի հաճելի պիտի եւրեայ քեզ : Այս է Բարիկի մէջ անոր սովորական դինը :

Մասնաւորապէս Մանօնին վրայ չխօսեր էի անոնց հետ , վասն զի չէի ուղեր որ զինաւորներն իմանան անոր վրայ ունեցած բուռն սէրս : Նախ կարծեցին թէ երիտասարդական կամահաճութիւն մ'էր այս որ կը գրդէր զիս փոքր ինչ զուարձանալ այն արարածներուն հետ . բայց երբ կարծեցին նշմարել թէ սիրահար էի , սուլքն այն քան աւելցուցին որ քսակիս պարսպուեցաւ . Մանթէն մեկնելով , ուր պատկեր էին , մինչեւ այն օրն ուր քսակիս հասանք :

Ըսեմ քեզ թէ ի՞նչ եղաւ այս Ճամբորդաթեան մէջ Մանօնին :

Հետ ըրած խօսակցութեանս ողբալի առարկան , կամ թէ տեսքն ի՞նչ տպաւորութիւն ըրաւ իմ վայ երբ զինաւորներէն աղասութիւն ըստայա անոր սայլին մօտելու : Ա՛Տ , խօսքերը միշա կիսովին կարտայատեն սրտին զդացումները : Բայց երեալայէ՛ անդամ մը խեղճ սիրուհիս վիճակը . կէս մէջքէն շղթայուած , յարգի գէզի մը վայ նստած , գլուխը նուազութեամբ սայլին մէկ կողմին վրայ կոթնած , երեալ գեղնած և թրջուած էր արտսութի առուակէ մ'որը իր արտեանոնքին մէջ տեղին անցը մը գտնելով կը հոսէին , թէե իր աշերը շարտնակ դայ էին : Եւ ոչ իսկ աշերը բանալու հետաքրքրութիւնը ունեցած էր զինաւորներուն ձայնը լսելով , որք կը վախնային յարձակում կրելու : Եր ձերմկնդէնները կեղասա և անշնորչէին . ձեռներն ալ օդին գժնդակութեանը արտադրուած . վերջապէս այս ամեն զմայլելի բազդատութիւնը , այն կերպարանքն որ կարողէր տիեզերքը կուապաշտութեան դարձնելու , անմեկնելի անկարգութեան և լշատութեան մէջ կերեար :

Ժամանակ մը Մանօնին նայեցայ ձիով սայլին քովին երթալով : Այնքան չէի կրնար զսպել ինքնինս որ բազմիցս վար պիտի զլորուէի վլուանդաւոր կերպով : Հառաջներս , յաճախարէմ վայերս անոր քանի մը նայուածքը վրաս հրակիրեցին : Մանօն ճանչեց զիս , և զիտեցի որ իր առաջին շարժաւմն եղաւ կառքէն գուրս նետուելու և քովս դաշու փորձ մ'ընել , սակայն իր շղթայէն բունուած ըլլալով , վերստին իր առջի դիրքն ընկաւ :

Աղաչեցի զինաւորները որ պահ մը կանկ առնուն կարեկցութեամբ . աղաչանքս ընդունեցան առ աղաչութեան : Վար իջայ ձիէս Մանօնին քովը նստելու համար : Այնքան թուլցած և ակարացած էր որ երկար ժամանակ չկրցաւ ոչ իր լեզուն զործածել , ոչ ալ ձեռները շարժել : Այս միջացին արտսութովս իր ձեռները կը թրջէի , և ես ալ չկրնալով և ոչ իսկ խօսք մ'արտաբերել , Մանօն և ես հաւասարապէս կը դանուէինք այնպիսի արտակի կացութեան մը մէջ որու օրինակը թերեւս չտեսնուած է : Ոչ նուազ տրտալի եղան նաև մեր խօսքերն երբ խօսելու աղասութիւնը վերստին դտանք : Մանօն քիչ խօսեցաւ : Կարծես թէ ամօթն ու վիշտն աւըեր էինաւ նոր ձայնին դորժարանները . ակար և երերուն կերպով կերնելու իր ձայնը :

Ընորհակալ եղաւ զինքը չմոռնալուս համար , նաև զիս վերջին անդամ մ'ալ տեսնելու և ինձ մասս բարեաւ ըսկելու գոչունակութեան համար զոր իրեն կը շնորհէի , ըսաւ հաւաչելով : Բայց երբ հաւասակցի Մանօնին թէ ոչինչ կարող էր զիս իրմէն բաժնելու , և թէ իրեն հոգ տանելու , ծառայելու , զինքը սիրելու . և թշուառ վիշնակս իր վիճակին միացնելու . համար պատրաստ էի մինչեւ աշխարհին մէկ ծայրն երթալ իր հետը , այս խեղճ աղջիկն այնքան սիրաշունչ և ցաւազին զգացումներով համակուցաւ որ իր կեանքին նըւկատմամբ վախս մ'ունեցայ այս ամենաբուռն յուզումէն : Իր հոգին բոլոր զգացումները կարծես թէ աշերուն մէջ կը հաւաքուէին : զոր իմ վայ կը յառէր անշարժ : Երբեմն բերանը կը բանար լմիցնելու համար բանի մը խօսք զոր կիսկէր և զոր սակայն աւարտելու ոյժը չէր ունենար : Սակայն իր խօսքերուն մէկ քանին կը յաջողէր ենելու բերնէն : Այս քանի մը խօսքով սիրոյս վրայ իր հիանալը կը յայտնէր , ծայրայելութեանը համար սիրացը դանդասներ կը յայտնէր , կը տարակուէր թէ կարենար ինքը բաւական երջանիկ ըլլալու ինձ այսքան կատարեալ մէր մը ներշնչած ըլլալով , թախանձանօք կը ինպէր որ հետը դալու գիտաւորութեանս հրամեշատամբ և ուղիւշ տեղ փնտուեմ ինձ արժանի երջանկութիւն մը զոր , կը մէր ինք , չէի կրնար յուսալ իր հետը :

Ամենէն անդութ բաղրին հակառակ կարանութիւնս կը դանէի Մանօնին նայուածքին և այն ասուկութեան մէջ , զոր անէի իր սիրոյն նկատմամբ : Իրաւ է որ կորուսեր էի այն ամեն բաները զոր ամեն մարդ կը յարգէ . սակայն Մանօնին սրտին աերն էի , և ինձի համար միայն իր սիրսն էր այն միակ բանը զոր կը յարգէի : Եւրոպայի մէջ ապրիմ , կամ Ամերիկայի մէջ , միթէ հոգս էր որ որ սիրի ապրէի սիրուշիս հետ : Բոլոր տիեզերքն երկու հաւատարիմ սիրահարներու հայրէնիքը չէ՞ : Ասոնք իրարու սրտին մէջ չէն դրտներ հայր , մայր , աղպական , բարեկամ , հարտառութիւն և երջանկութիւն :

Միայն մէկ բան կը վրդովէր զիս , այսինքն զան չքաւորութեան սիրոյից ենթարկուած տեսնելու վախը : Արդէն կենթագրէի թէ անմշակ և վայրենաբնակ երկրի մը մէջն եմ անոր հետ :

«Յսպահով եմ թէ , կըսէի իւրովի , այն երկրին վայրենիներուն մէջ չլրնար ժ . . . Մ . . . ին և հօրս պէս անդութիւնը դանուիլ : Անոնք դէթ պիտի թողուն մնզի որ հանդիսաւ ապրինք :

Եթէ Ճշդրիս են անոնց վրայօք զրուած անդեկութիւնները , այն վայրենիները բնութեան օրէնքին կը հետամին : Ձեն ձանչեր ոչ աղահութեան կատաղութիւնները որք կը զրաւեն ժ . . . Մ . . . ը , ոչ ալ պատույ ցնորական գաղափարները որք հայրս թշնամի ըրին ինչ դէմ : Զալիսի վրդովն երկու սիրահարները որոնց իրենց պէս պարզութեամբ ապրիլը պիտի աեմնեն : Ուստի այս կողմէն հանդիսաւ եի :

Սակայն վիսպային գաղափարներ չէի կազմեր կեանքի հասարակ պիտոյից նկատմամբ : Ծառ անդամ զդացեր էի թէ անտանելի հարկ կան , մանաւանդ փափկասուն աղջիկ մը համար որ հանդստութեամբ և առաստութեամբ ապրելու սովորած է : Կը յուսահատէի գիտելով թէ ունայնապէս պարզեր էի քսակս , և թէ մնայած բատակս ալ պատրաստ էր յափշտակուելու խարեբայ զինաւորներէն : Կը համեստի թէ պրտի գումարով մը կրնայի յօյս ունենալ ոչ միայն ժամանակ մը թշուառութեան դէմ դնելու Ամերիկայի մէջուր այն քան հազուազիւտ էր զրամը , այլ նաև հոն աեւական դործատունի մը համար ձեռնարկութիւն մանդամ կազմելու : Այս մտածութեան միտքս եկաւ նամակ կրել Թիվերժին զօր միշտ այնքան սրասրաստ զտեր էի բարեկամութեան օղնութիւնն ինձ շնորհելու : Գը բեցի նամակս առջի քաղաքն ուսկէ անցանք : Ուրիշ պատճառ . չէի ցույներ իրեն բայց միայն այն սախորդական հարկաւորութիւնը զոր պիտի ունենայի Հալլը-Ծը-Արասի մէջ , խոստավանելով անոր թէ հոն կերթայի Մանօնը տանելու համար :

Յիսուն սովի կուզէի Թիվերժէն :

«Հավըի մէջ այս գումարը հասցուր ինձ թղթատան կառավարս չին ձեռքովը , կըսէի անոր : Քաջ կը աեմնես որ վերջին անդամն է բարեկամական սիրայդ ձանձրոյթ տալս , և թէ դժբաղդ սիրուհին միշտ իզմէ յափշտակակուած ըլլալով չեմ կրնար հաւանիլ որ մեկնի ան առանց քանի մը ափտփումներու որք կրնան մեղմ մը իր վիճակին դառնութիւնը և իմ ցաւերուս սաստիութիւնը :

Զանաւորներն երբ սիրոյս բոնութիւնը հասկցան , այնքան անհամբութիւնը կերպով վարուեցան որ շարունակ կրկնապատկելով իրենց փոքրադժյն զիջումներուն դինը շտատով զիս յետին չքաւորութեաման դատապարտեցին : Սէրը սակայն չէր ներեր ինձ խնայողութեալիք հսկելու քամիկո : Առաւոտէն մինչեւ զիջումները մինչեւ շտամակը մէտ մատով , այլ օրերուն ամերով երկայնութեամբը կը չափուէր ինծի համար Աներջապէս քըս սակա բոլորովն գատարկ ըլլալով , վեցը ապիրամներու քմահաճութիւնները և կոշտութիւնները կրելու ենթարկուեցայ , ապիրամներոր անտանելի ամբարտաւանութեամբ մը վարուեցան հետո : Բասիր մէջ աչքովլ տեսար անոնց վարմունքը : Հանդիպումի դադարումի երջանկաւէտ վայրկեան մէտ զոր բաղդը շնորհեց ինձ : Անշտերս տեսնելով զթացիր ինձ , և վեհանձն սրտիդ քով միայն այդ գթութիւնն ունեցայ իրը յանձնարարական : Շնորհիր այն օդնութեամ զոր առատաձեռնութեամբ ըրիր ինձ , կրցայ համիկ մինչեւ Հալլը , և զինաւորները բոնեցին իրենց խոստումը այնքան հաւատարմութեամբ որբան չէի յուսար իրենցմէ :

Հավըր հասանք : «Նախ նամակատունը զայի : Թիվերժ տակաւին ժամանակ ունեցած չէր ինձ պատասխան զրելու : Ճշգապէս տեղեւկացայ թէ ո՞ր օրը կրնայի սպասել իր նամակին : Երկու օրէն ետք կրնար համակլ այն , և դժբաղդութեան մէկ տարօրինակ անօրինութիւնն ուղեց որ մեր նաւը պարտաւորի մեկնիլ սուրհանդակին հասնելու օրին հետեւեալ օրը : Զեմկրնար նկարագրել քեզ յուսահատութիւնն :

—Ի՞նչ , գոչեցի , գժբաղդութեան մէջն անդամ սկզբք է որ նըշ շանաւոր ըլլամ աղէտից ծայրայեղութիւններովը :

Մանօն պատասխանեց :

—Բա՛րէ , այսքան թշուառ կեանք մարժանի է այն հողին զոր կը տանինք : Մեռնիփնք Հավըի մէջ , սիրելի ասպետս : Թա՛ղ մահը յանկարծ վերջ տայ մեր թշուառութեանց : Ինչու երթանք զմանք մեր հետը քաշքշելով անձանօթ երկրի մը մէջ ուր անշուշտ կը ողարտաւորինք սոսկալի ծայրայեղութեանց հանդիպիլ , քանի որ ուղեցին տանջանք մընել ինձ այն ծայրայեղութիւնները : Մեռնիփնք

կրկնեց Մահօն , կամ դէթ մեսցուր զիս , և դնա ուրիշ վիճակ մը քնառէ՝ աւելի երջանիկ սիրուհի մը դիրկը :

— Ձէ՛ , չէ՛ , ըսի . ինծի համար նախանձելի վիճակ մ'է քեղի հետ դժբաղդ ըլլալը :

Մահօնին այսպէս խօսիլը սարսափ տուաւ ինձ : Հասկցայ որ իր տղէտիցը ներքե ջնշուած էր ան : Զանք ըրի աւելի հանդարտ կերա սպանք մ'առնիւր որպէս զի յուսահատելու և մեռնելու խորհուրդ ները հանեմ իր մտքէն : Որոշեցի այնուհետեւ ալ այս ընթացքն ունենալ , և եռքէն զգացի թէ ոչնչ այնքան կրնայ արիութիւն տալ ինոչ մ'որբան իրմէ սիրուած մարդուն քաջասրութիւնը :

Թիսերժէն օգնութիւն ընդունելու յօյս կորելով , ձիս ծախեցի Փոխարժէն առած սոտակու առատաձեռնութեանցդ մնացորդին հետ ընդամենը ու թուկիս ոսկիի պղտի դումարը կը կաղմէր : Երեքուկէս ոսկիով Մահօնին սփոփումին հարկասոր քանի մը քան ծախու . առի , և մնացորդ հինգ ոսկին զգուշութեամբ պաշեցի իրը Ամերիկայի մէջ մեր երջանկութեամն և յօյսերուն հիմք : Գժուարութիւն չկրեցի նաւն ընդունուելու : Անատեն կամուլին զալթականներուն հետ երթալու տրամադիր երխասարդին ըը կը բնտուելին : « Կառողէք չուզուեցաւ իզմէ , կերակուրս նոյնպէս ձրի չնորհուեցաւ ինձ : Քարիզի թղթատարը հետեւալ օրը մեկնելու կը պարտաւորէր , Թիսերժէն նամակ մը դրելով նամակառունը ձգեցի : Այս նամակին անշուշտ կարող էր յետին ծայր Թիսերժին արդահատութիւնը զրդուելու , քանի որ այս բարեկամը զայն ընկունելով ըրաւ այնպիսի որոշում մ'որ գժբաղդ բարեկամի մը նկատող անհուն սիրոյ և վէհանձնութեան դահձէ մը միայն կլնար արտադրուիլ :

Սուպահաս բանալով միսանը նաւել : Ճորիս անդոնդաս նոպտատաւ որ եղաւ մեղի համար : Մահօնին և ինծի համար առանձին տեղ մը սոտայայ նաւապետէն : Սա բարեհաձեցաւ մեղի մեր թշուառ ընկերակիցներուն կարգէն չսեպելու : Առջի օրէն մեկուսի առեր էի նաւապետը , և իրմէ քիչ մը մեծարուելու համար գժբաղդութեանց մէկ մասը յայտներ էի իրեն : Զկարծեցի թէ յանցանք մ'էր ինձ առ մօթալի ստախօսութիւն մը , ուստի ըսի թէ կարդուած էի Մահօնին հետ : Հաւաալ ձեւացաց և իր պաշտպանութիւնը չնորհեցի ինձ :

Մեր նաւարկութեան մինչև վերջն այս սպաշտպանութեան նշանները տեսամիք : Մեղի մարդարաբար կերակրելու հոգն ունեցաւ , և շը նորհիւ այն ախածութեան զր ցոյցուց մեզ՝ մեր թշուառ ընկերակիցներէն ալ յարգուեցանք : Հարունակ ուշադրութիւն կընէի որ սէս զի Մահօն ամնափոք անհանդատութիւն մը չկրէ : Սիրուհին կը նշմարէր այս ուշադրութիւնն . նշմարելով , նաև սաստկապէս զգաւլով այն տարօրինակ ծարայեղութիւնը ուր հասեր էի իրեն համար , Մահօն այնպիսի բուռն արդահատութիւնն և եռանդապին սէր կրցուց ցընէր իմ վրայ , նաև այնքան ուշադրութիւն կընէր ամնաթեթեւ սփառոյից որ ծառայութեան և սիրոյ մշնջենաւոր նախանձութիւն մը կար մեր երկուրին մէջ : Ձէի ցաւեր եր րոպա չգտնուելուս համար : Ընդհակառակն քանի կը մօտէինք Ամերիկայի , այնքան տեղի կզգայի սրտիս ընդարձակութիւն և հանդարտիւլը : Խթէ կարենայի տապահով ըլլալ թէ կեսնիր բացարձակ պիտօքըէն չպիտի զրկուիմ Ամերիկայի մէջ , չնորհակալ պիտի ըլլայի բաղդին մեր աղէտից այս քան նպաստաոր դարձուած մը տուած ըլլալոն համար :

Երկու ամիս նաւարկելէն ետք վերջապէս հասանք այն ծովեղն որ կը փափաքէինք համակիւ : Երկիրն առջի տեսքով ախործելի բան մը չցոյցուց մեզ : Չորաբեկ և անբնակ դաշտեր էին երեածը , որ հաղիւ հաղ կը տեսնուելին քանի մ'եղեղներ և քանի մը տերեաթափ ծառեր : Ոչ մարդու և ոչ անասունի հետք կար բնաւ : Սակայն նաւապետը քանի մը թնթանութ արձակել աալով , շուտով նշմարեցինք Կոլե-Օրէանի քաղաքայիներու խումբ , որ սաստիկ ուրախութեան ցոյցերով մեզ մօտեցան : Քաղաքը նշմարէր էինք , վան զի պղտի բրուրի մ'ետեւը պահուած է այն : Երկինքն իջած մարդերու պէս ընդունուեցանիք :

Այս խեղջ բնակիչները փաթեացին բիւր հալցումներ ընելու մեզ ֆրամսայի վիճակին և այն զանազան դաւաներուն վրայօք ուր ծներ էին իրենք : Ալ համբաւէին մեղի իր իրենց եղայրները և իր սիրեւլի ընկերներ որք կը գային իրենց թշուառութեան և առանձնութեան մասնակցելու : Սիամին ճամբայ ելանք քաղաքն երթալու համար , սակայն յառաջանալով զարմացանք երբ տեսանք որ քանի մ'անցուց խրժիթներու միաւորութիւն մ'էր միայն ինչ որ մինչեւ անատեն դուլ-

ուած էր մեզ իբր լաւ քաղաք մը : Այս իրձիթներուն մէջ հինդ կամ վեց հարիւր հողի կը բնակէր : Կառավարչին տունն իր բարձրութեամբն ու գիրքով փոքր ինչ ընտիր երեցաւ մեզ : Այս տունը կը պաշտպանուի քանի մը հողաշն ամրոցներէ , զոր լայն խրամ մը կը շրջապատէ :

Նախ կառավարչին ներկայացուեցանք: Երկար ժամանակ նաւապետին հետ խօսակցեցաւ . ապա մեր քովս զարով նորէն , մի առ մի դիտեց այն ամեն աղջիկները որք նաւով եկեր էին : Երսուն հողի էին անոնք , վասն զի Հայրի մէջ հանդիպեր էինք ուրիշ խումբի մալ որ մերինին հետ նաւը մտած էր : Կառավարիչն երկար ժամանակ զանոնք քննելէն ետք քաղքին զանազան երիտասարդները կանչել տուաւ որք ամուսինի մը սպասելով կը տառապէին : Աղջիկներուն ամենէն աղջորները երիտասարդաց զլսաւորներուն տուաւ , և մնացածը վիճակահանութեամբ բաժնուեցաւ : Տակալին չխօսեցած էր Սահնօնին հետ . բայց երբ հրամայեց միւսներուն որ դուրս ենին , Սահնօնը և զիս կեցուց :

— Նաւապետէն իմացայ , լսաւ , թէ կարդուած էր և թէ Ճամշուն վրայ Ճանչեր է ձեր խելացի և արժանեաց աէր անձեր ըլլաւը : Զեմ հարյներ այն պատճառները , որք ձեր դժբաղդութեան պատճառն եղան . բայց եթէ իրաւ է ձեր այնքան կենցաղավարութիւն ունենալը որքան կերեայ ձեր դէմքէն , ոչինչ պիտի ինայեմ ձեր վիճակը մեղմելու համար , և գուք իսկ պիտի օղնէր ինձ հաջոյք մը դսնելու այս վայրենի և ամայի երկին մէջ :

Պատասխան տուի այն կերպով որ ըստ իր ամեն կերպէ աւելի կրնար անոր մեր ունեցած դաղափարը հաստատել :

Քանի մը հրաման տուաւ քաղքին մէջ մեզ բնակարան մը պատշաճելու համար , և կեցուց մեզի որսպէս զի իր հետմ ընթրենք : Թէ կ գժբաղդ աբսորեալներու հրամանատար մ'էր ան , բայց և այն պէս շատ քաղաքավարութիւն տեսայ իր վրայ : Հրապարակաւ ամենին հարցում չըրաւ . մեզ մեր արկածներուն վրայօք : Խօսակցութիւնն ընդհանուր եղաւ , և մեր արտմութեան հակառակ Սահնօն և նույն չափն օգնելու որ խօսակցութիւնն ախորմելի ըլլայ :

Ընդրիքէն ետք կառավարիչը մեզի տարաւ այն բնակարանն ուր

մեզի համար պատրաստուած էր : Ողբումին իրձիթ մը դտանք որ տախտակով և տիղմով շնուած էր . այս իրձիթն երկու կամ երեք գետնաշնչն սենեակ և անոնց վերեւը վերնայարի մ'ոնէր : Կառավարիչը հինդ կամ վեց աթու և կեանքի հանգստութեան հարկաւոր ուրիշ քանի մը բաներ գնել տուած էր հին :

Մահնօն աշաբեկ երեցաւ այտքան տրտմալի բնակարան մը տեսանելով : Աւելի շատ ինձի քան թէ իրեն համար կը ցաւէր ան : Կատաւ երբ մինակ մնացինք , և սկսաւ գառնապէս լալ : Նախ աշխատեցայ զնաքը միխթարելու . բայց երբ համացուց ինձ թէ միայն իմ վրայ կը ցաւէր և թէ մեր միամնական դժբաղդութեանց մէջ կը նկատէր միայն այն աստապանքը զոր կը պարտաւորէի կրել , բաւական քաջարութիւնն և ուրախութիւնն անդամ ցուցնել ձեւցուցի որպէս զի ինքն ալ սիրու ասնու և ուրախանայ :

— Ի՞նչ գանգաս ունենամ , ըսի Մահնօնին : Ունիմ ինչ որ միակ փափաք է : Կը սիրես զիս , այնպէս չէ՞ . ուրիշ բնչ երջանկութիւն տված եմ ունենալ երբէք : Երկինց թողունք մեր բաղդը շննելու հողը : Բոլորովին յուսահատական չերեար ինձ այն : Կառավարիչը քաղաքավար մարդ մ'է . ակնածոթիւն ցուցաց մեղ . չպիտի թողու որ հարկաւոր բաներէ զբկունք : Գանք մեր իրձիթին անշքութեան և կաչ կարասին կոշտութեան . ինչպէս գուն ալ նշմարեցիք , չոս սակաւաթիւ են այն անձինք որոնց բնակարանն ու կաչ կարասին լսաւագոյն երեան . և ասկից ՚ի զատ հիանալի քիլակէտ մ'ես գու , կը շարայարէի պակնելով Մահնօնը , ամեն ուսի ուիկի կը փոխես :

— Ուրիշն աշխարհիս առաջին հարուստը պիտի ըլլաս , պատասխանեց Սահնօն . վասն զի եթէ երբէք չեղած է քու սիրոյդ պէս սէր մը , անկարելի է նաև սիրուիլ այնքան կաթովին սիրով որքան գու սիրուած ես : Խեղինքս կը դատեմ . շարայարէց : Քաջ կըզա գամ թէ բնաւ արժանի չհանգիսացայ այն անքաւ սիրոյդ զոր ուս նիս ինձի համար : Պատճառեցի քեզ վիշակ զոր չկրցար ներելինձ առանց ծայրացել բարեսիրութեան մը : Թէթև և յեղյեղուկ եղայ և քեզի նաև մալեկնաբար սիրելով , ինչպէս միշտ սիրեցի , գեւ-

ապերախտ մ'էի միայն : Բայց չես կրնար կարծել թէ որքան փոխ ուած եմ : Արցանքս , որու Գրանսայէն հետ մեջնելդ ՚ի վեր հոս սիլը ստէալ տեսար , և ոչ իսկ անդամ մ'իմզմ բաղդադութեանցս վրայ թափեցաւ : Ասմա զի երբ գուն ալ մասնակցեցար այն գժբաղդութիւներուս , իսկոյն անզգալի եղան ինձ անմոք : Արտասուելը միայն պատճառն էր քու վրայ սերս և կարեկցութիւնս : Զեմ միփիթարութիր խորհերով թէ կենացս մէջ վայրիեան մը կրցեր եմ վշտացընել քեզի : Անընդհատ կը մեղադրեմ ինքզինքս անհաւատարմութեանցս պատճառաւ , և շարունակ կարգահատիմ և կը հիմամ տեսնելով թէ սերն ինչե՛ր ընելու կարող ըրաւ քեզի թշուառուհիի մը համար որ արժանի չէր այն սիրյ , և որ ելթէ իր բոլոր արխոնը թափելու ալ ըլլայ , շարայրեց Մանօն արտառքիյորդումով մը , իր քեզ պատճառած վիշտերուն և ոչ իսկ կէսին փոխարէնը տուած պիտի ըլլայ :

Մանօնին արցունքը , խօսքերը և ձայնին հնչիւնն որութարերեց զամոնք , այնքան զարմանալի տպաւորութիւն մ'ըրին իմ վրայ որ հոգիին մէջ տեսակ մը բաժանում զցաւ կարծեցի :

— Զգուշացի՞ր , ըսի , զգուշացի՞ր , սիրելի Մանօն . սիրոյդ այդ ամենասասաթիկ ցոյցերուն զիմանալու չափ ոյց չունիմ . սովորած չեմ ծայրայեղ ուրախութեանց : Ա՛ Աստուած , զոչեցի , ա'լ բան մը չեմ հայցեր քեզմէ քանի որ Մանօնին սիրոն իմն է ասպահովալիս . այս սիրոն է այնպէս ինչպէս կուզէի երջանիկ ըլլալու համար . ա'լ հիմա չեմ կրնար երջանիկ ըլլալէ դադրիլ . ահա երանութիւնս աղէ հաստատուած է :

— Հաստատուած է երջանիութիւնդ , կրինեց Մանօն , և թէ ըստ քեզ իդմէ . կախում ունի այն , և քաջ զիտեմ թէ ես ա'լո՛ւր կը նամ անկասկած զսմնել միշտ իմն :

Պառկեցայ այս զմայլելի գաղափարներով , որք իրձիթս աշխարհիս թագաւորին արժանի պալատին փոխեցին : Այս գաղափարներուն վրայ Ամերիկան հեշտութեանց վայր մ'երեցաւ ինձ :

— Պէտք է Կուվել-Օբլէանը գալ , կըսէի ստէալ Մանօնին , երբ մարդս կուզէ սիրոյ Շշմարիտ քաղցրութիւնները վայելիլ : Հոս է որ առանց շահու , առանց նախանձու , առանց անհաւատարմութեան

կրնան սիրուիլ երկու էակ : Աեր հայրենակիցներն ուսկի քնտուելու կը կան հոս . չեն երևակայեր թէ շատ առելի յարդի գանձեր զբատակը մննը :

Աշակը թէ թեամբ կառավարչն բարեկամութիւնը մշակեցինք : Աեր զալէն քանի մը շարաթ եաք բարեհամեցաւ ինձ պատի պաշտօն մը տալու որ բերդին մէջ պարակ մնացած էր : Թէւ շատ մեծ չէր այս պաշտօնը , ասկայն ընդունեցայ իբր երկնային չորս մը : Վար չորհիւ կարող կը լուսայի ապրիլ առանց մէկու մը ծանրութեան ըլլալու : Ծառայ մը բռնեցի ինծի համար , սպասուհի մ'ալ Մանօն նին համար : Աեր պղափ բաղդը կարգադրեցաւ : Կանոնաւոր / կերպով կը վարուեի . ոչ նուազ կանոնաւոր էր նաև Մանօն : Ամեն անզամ որ ասիթը կը պատահէր , կը վութայինը ծառայութիւն և աղէ կութիւն ընելու մեր գրացիներուն : Այս մարգասիրական յօժարութեան և մեր կերպերուն քաղցրութեան չորհիւ բոլոր զաղթականաց վստահութիւնը և սերը շահեցանք : Քիչ ժամանակի մէջ այնքան յարդ ու համարում զտանք որ կառավարչն եաք քաղքին առաջին անձերը կը սեպտեմբեր :

Աեր զւաղրութիւներուն անմեղութիւնն և այն հանդարտութիւնը ուր էինք շարունակ , ծառայեցին անզգալի կերպով մը կրօնական զաղափարներ յիշեցնելու մեջ : Մանօն երբէք ամբարիշա աղջիկ մը չեղած էր : Ես ալ նոյնպէս չէի այն ծայրայեղ անառակներու կարգէն որք վասք կը համարին բարուց ապակամաւթեան վրայ աւելցնելան-կրօնութիւնը : Սէրը՝ երթուասարդութիւնը պատճառած էր մեր աւմեն անկարութիւնները : Փորձառութիւնն կախէր հասակաւորութեան տեղ ծառայել մեջ . փորձառութիւնն ունեցաւ մեր վրայ այն սոզեցութիւնը զօր կունենան տարինները : Աեր խօսակցութիւնները , որք միշտ խորհրդածութիւններով կը լուսային , անզգալի կերպով առաքինի սիրոյ մը հաշակը տուին մեզ : Կախի ես Մանօնին տառապրկեցի այս փոփախութիւնը : Ալ հանչէի իր սրտին մկզբունքը : Մանօնին ամեն զդացութիւնն ուղիւլ և բնակուն էին . այս յասկութիւնը ունեցողն առաքինութեան կը միտի միշտ : Համեցուցի Մանօնին թէ մեր երանութեան բան մը կը ողակէր :

— Պակսածն ոչ այլ ինչ է բայց եթէ երկնից հաւանութիւնը :

Մեր հոգին այնքան դեղէցիկ և սիրան այնքան բարեկազմ է որ չենք իրնար կամովին ապրիլ մեր պարտաւորութիւնը շարունակ մոռնալով : Երաւ է որ այս մոռացումով ապրեցանք Գրանսայի մէջ ուր չէինք իրնար փոխադարձապէս սիրուելէ չգագրիլ, ու ալ կրնայինք օրինաւոր միջոցով մը գոհ ըլլալ, սակայն Ամերիկայի մէջ ուր ամսախ ենք բոլորովին, ուր աստիճանի և պատշաճութեան բոնաւորական օրէնքներէն զգուշանալու պարտաւոր չննի ա՛լ և ուր ամուսնայած կը կարծուինք իսկ, ով կարդիլ մեզի քիչ օրէն իրօր ամուսնալու և մեր մէրը աղնուացնելու այն երգումներով որոնց հրաման կը տայ իրօնքը : Իմ մասին նոր բան մը չեմ ընծայեր քեզ սիրաս և ձեռքո ընծայելով, սակայն պատրաստ եմ խորանի մ'առջն վերստին քեզ ընծայելու զանմոք :

Այս խօսքերս ուրախութեամբ կը համակէին զան :

—Կը հաւտամ որ ես ալ, պատասխանեց, Ամերիկա դանուելէս ի վեր հաղար մաղար խորհեցայ ասոր վրայ : Քեզի գժզոչելու վախը սրախ մէջ թագուն պահեց այս փափաքը : Ամուսնուհիդ ըստելու փառախրութիւնը չեմ համարձակիր տածելու :

—Այս, Մանօն, պատասխանեցի, իսկոյն թագաւորի մ'ամսւա չուհին պիտի ըլլայիր եթէ երկինք թագուլ մը ծնել տուած ըլլար զիս : Ալ չվարանինք : Վախնալու արդելք մը չունինք ամենեին : Վուզեմ այսօր իսկ կառավարչին խօսիլ այս նիւթիս վրայ և խոստովանիլ իրեն թէ մինչեւ այսօր խարեցինք զինքը : Գուեհիկ սիրահարներու թողունք որ վախնան ամսւամութեան անդրակելի շղթասներէն, շարայարցիք : Նամք այսպիսի վախ մը պիտի չունենացին ես թէ մեզի պէս ապահով ըլլային միշտ սիրոյ շղթաները կրելու :

Այս որոշումն ետք կատարեալ ուրախութեան մէջ թողտցի Մանօնը :

Համազուած եմ թէ աշխարհիս մէջ չկայ պարկեցա մարդ մ'որ չհաւանի զիսաւորութիւններս այն պարագաներուն մէջ ուր կը զըանուեի, այսինքն անխուսելի կերպով զերի երկը էի արիփի մը զոր չէի կրնար զագել, և կը կուռէի խզնի այնախի տաղնասներու հետ զոր չէի սրասուորեր լուեցնել : Բայց պիտի գտնուի մէկի որ անիւ բաւութիւն համարելով զանգաներս ամբասամէ զիս, եթէ կը հեծեմ

Երկինից խօսութեան դէմորովմերժեց այն նպատակս, նպատակ զոր իրեն հաճելի ըլլալու համար միայն կազմոր էի . մերժէց, ըսի, բայց կը սխալիմ, չէ, չմերժեց, այլ պատժեց զայն իրը ոճիր մը : Սա տուած համբերութեամբ հանգուրժած էր ինձի դէմ մինչդեռ կուրօրէն մալութեան ճամբուն մէջ կը քայլէի, և իր իմաստ պատուած հաները պահած էր ինձ այն միջոցին ուր կախեի առաքինութեան գիմել վերստին : Կը վախնամ որ զուցէ բաւական ոյժ պիտի չունենամ աւարտելու համար ամենն աղետալի դէպի մը պատմութիւնը :

Խնչուեալ խօսք ըլլեր էի Մանօնին հետ, կառավարչին տունը զայի աղաւելու համար զինքն որ հաճի մեր հարսանեկան հանգիսին կատարման : Չատ պիտի զգուշանայի թէ՛ անոր և թէ՛ ուրիշ որ և է անձի մը խօսելու այս նիւթին վրայ եթէ կարենայի յուսալ թէ իր ողորմաբաշխը, որ անսակեն քաղքին միակ քահանան էր, այս ծառուայութիւնը մաստոցանէր ինձ առանց կառավարչին մասնակցութեանը, բայց չհամարձակելած յուսալու թէ այս քահանան ուղղէ լուսութիւն պահելու խօսք ապալ, յայտնապէս շարժելու որոշումն ըրեկ էի:

Կառավարիչն եղրօրորդի մ'անելը Սինըլէ անոնցով, որ սաստիկ օփերի էր իրեն : Եթեսուն ասրեկան և քաջ, այլ բարկացու և անհամբոյ մարդ մ'էր : Կանակը չէր Սինըլ . Մանօնին զեղցիութիւնը մեր հասած օրէն խոկ յուղած էր զան, և ինը կամ տան ամփուան մէջ Մանօնը տեսնելու անթիւ առիթները ունեցած ըլլալով, իր սէրն այնքան սասակի բռնկած էր որ անոր համար զալտնապէս կը մաշուէր : Սակայն իր հօրն և բարձրացիներուն հետ հանգօւած ըլլալով թէ իրօր ամսւանցեր էի, իր սէրն ամեննեին բան մ'երեան չհանելու չափ զասած էր, և ինձ աղեկութիւն ընելու բազմաթիւ պարագաներու մէջ եռանդ աղաւամ ցուցուցած էր :

Երբ բերդը հասայ, զինքն իր հօրեղոր քափա դասայ : Նմենեին պատճառ մը չունեի որ պարտաւորէի նպատակս զաղմնի պահէլ Սինըլէն, ուստի առանց զժուարութեան ամեն բան յայտնեցի իր առջն : Կառավարիչն իր սովորական բարեսիրութեամբը մտիկ ըրաւինձ : Պատմութեանս մէկ մասը պատմեցի, զոր հաճութեամբ լսեց, և երբ աղաւեցի որ ներկայ զանակի հարսանեկան հանգիսին զոր միտքը

դրեր էի, համդիսին քուլոր ծախսն ինքն իր քսակէն ընելու խօսք տուաւ վեհանձնութեամբ : Զդեցի գայի խիստ գոհ :

Ժամ մ'եաք քահանային տունս մանելը տեսայ : Կերեակայէի թէ ամուսնութեանս վրայօք քանի մը հրահանդ տալու եկած էր : Քայց ցուրտ կերպով բարև տալէն ետք երկու խօսքով յայտնեց ինձ թէ պարոն կառավարիչը կարդիլէր զիս ամուսնութեան վը րայ խորհելու և թէ ուրիշ զիտաւորութիւններ տնէր Սանօնին վը րայ :

— Մանօնին վրայ ուրիշ զիտաւորութիւններ ունի՛, ըսի սրտի մահածին Ճնշումնը մը : Եւ ի՞նչ են զիտաւորութիւնները, աէ՛ր հայր :

Պատասխաննեց թէ զիտէի անցուշտ կառավարչին տէր ըլլալը, թէ Սանօն Գրանսայէն գաղթականաց համար զրկուած ըլլալով, իշրեն կը պատկանէր անոր վրայ իշխել ուղածին պէտ, թէ մինչեւ հիմակ այս իշխանութիւնը չամացուցած էր կարծելով թէ կարդուած է ան . թէ սակայն իզմէ խի իմացած ըլլալով Սանօնին անամուսին ըլլալը, յարմար կը դատէր զան Պ. Անըլէյին տալ, որ սիրահարած էր անոր :

Բարիլութիւնս խոհեմութեանս յաղթեց : Խորխտարար հրամայեցի քահանային որ դուքս ենէ տունէս, երդում ընելով թէ կառավարիչը, Սինըլէն և բոլոր քաղաքացիք միասին չպիտի համարձակին դասնալու կոմիկս կամ սիրուհիս, ինչպէս կուգէին անուանելանոնք :

Խոկոյն Սանօնին իմացուցի այս աղետալի լուրը զոր պահ մ'առաջ առեր էի : Ստածեցինք որ Սինըլէ մեխելէս ետք իր հօրեցորը միտքը դարձուցած էր, և թէ երկար ատենէ ՚ի վեր նիւթուած նախատակի մ'արդիւնքն էր այն : Անոնք զօրաւորագոյն էին մեզմէ : Կումել-Օրէանի մէջ կը դանուէ ինք իրը ծովի մը մէջ, այսինքն անբար անջրակետներով բոլոր աշխարհէս բաժնուած : Ուր փախչէինք անձանօթ երկրի մը մէջ, ուր բնակիչ չկար, կամ բնակիչներն էին անդութ գտաններ և ասոնց պէս բարբարոս վայրենիներ : Կը յարդուէի քաղքին մէջ, բայց չէի կրնար յուսալ ժողովուրդն ՚ի նպաստ իմ յուղելու գէշութեան համեմատութեամբն անորմէ ունութիւն մը յաւալու համար : Ստակի պէտք պիտի ըլլալը, և ես աղքատ էի :

Ասկից՝ ի զատ ժողովագային յուղունքի յաջողութիւնն անստոյդ էր, և եթէ բաղդը չնպաստէր մեղ, մեր դժբաղդութիւնն անդարմաննելի եղած կըլլար :

Այս ամնն խորհուրդնելը մտքիս մէջ կը շըջէի . անսնց մէկ մասը Մանօնին յայսնեցի, ուրիշ նոր խորհուրդներ կազմեցի առանց իր պատասխանին սպասելու . որոշում մը կընէի, ապա կը մերժէի զայն՝ ուրիշ մընելու . համար, մինակս կը խօսէի, բարձրաձայն կը պատասխանէի իմ խորհրդածութեանց . վերջապէս կը գսնուէի այնպիսի յուղումի մը մէջ որու . հետ ոչինչ կընամ բաղդատել, վասն զի բնաւ անոր հաւասար յուղում մ'եղած չէ : Սանօն ինձ կը նայէր շարունակ . խուղութիւնէս կը հասկնար վտանգին մեծութիւնը, և աւելի ինձի քան թէ իրեն համար զողալով այս սիրաշանչ աղջիկն և ոչ իսկ բերանը բանալու կը համարձակէր՝ իր վախըրը ինձ յայսնելու . համար :

Բիւր խորհրդածութիւններէ հաք կանկ առի որոշումի մ'առջեւ, որ է երթալ կառավարիչը զանել, յարզանքու և սէրը յիշեցնելով զինքն ՚ի զութ շարժելու աշխատիլ : Սանօն ուղեց չժողովութոր դուրս ելում : Արտասուալիր աշերով կընէր ինձ .

— Մահ զանելու կերթաս, պիտի մեռյնն քեզի . ա՛լ չակիփ տեսնեմ քեզի . կուզեմ քեզմէ առաջ մեռնիլ :

Հարկ եղաւ շաս ջանք ընել՝ համոզելու համար զինքը թէ պէտք էր դուրս ենելու, և թէ ինքն ալ կը պարտասորէր առնը կենալու խօսք առի Սանօնին թէ վայրինէ մ'ետք պիտի տեսնէ զիս : Ուր զիսէր ինք, ոչ ալ ես թէ երկից բոլոր բարկութիւնն և մեր թըշնամիներուն բոլոր կատղութիւնն իր վրայ միայն պիտի թափուէր :

Բերդը դացի . կառավարիչն իր ողորմաբաշխ քահանային հետան էր : Կը դաթը շարժելու համար հւութեան և հնազանդութեան այն պիտի ձևերով խօսեցի որոնցմէ թերես ամշնալով զետինն անցնէի եթէ ուրիշ որ և է իրաւունք մը պաշտպանելու համար ըլլած ըլլայի : Իր առջեւ շարեցի այն ամեն պատճառները, որք կը պարտաւորին ստուգապէս տպաւորութիւն ընել սրտի մը վրայ, երբ կատաղի և անդութ վազրի մը սիրաշ չէ այն :

Այս բարբարոսն իմ գանգատներուս երկու պատասխան տուաւ

միայն և հարիւր անգամ՝ կրիսեց զայն . այսինքն թէ Մանօն իրմէ կախում ունէր , թէ իր խօսքը տուած էր եղորորդւոյն : Արոշեր էի համբերել վերջին աստիճան . բաւական համարեցի ըսել իրեն թէ զինքը մեծ բարեկամ կը կարծէի և թէ հետեւաբար չպիսի ուղեր մեռնիլս որու աւելի պիտի հաւանի քան թէ սիրոհիս կորու սելու :

Գուրս ելնելով կատարելապէս համոզուեցայ թէ չէի կընար բան մը յուսալ այս յամառ ծերունիէն , որ քիւրից դեհենին մատնը մէր թերես իր եղօրորդիին համար : Սակայն մինչեւ վերջը մեռմուշ թեամբ վարուելու նպատակիս մէջ յարաանեցի որոշելով՝ եթէ ծայրացեղ ամփառութեամս դիմէին առաջ Ամերիկային այն արիւնաբայր և սոսկալի տեսարաններուն մին զոր սերն երբէք արտադրած չէ :

Տունս կը դառնայի այս որոշումին վրայ խորհելով երր բաղրը , որ կուղէր շատապէլ կործանումն , առջես հանեց Սինըլէն : Վչերուս մէջ տեսաւ խորհուրդներուս մէկ մասը : Ըսի թէ քաջ էր ինք . քոլս եկամ : « Ձե՞ս բնտուեր զիս , ըստաւ զիտեմ որ դիտառութիւններս կը թշնամանեն քեզի , և արդէն աղէկ համացայ թէ կը պարտառըէինք իրարու զլաւիը կարել . երթանք տեմնենք թէ ո՛վ պիտի ըլլայ աւելի բարեբաղըր : »

Պատասխանեցի թէ իրաւոնք ունէր , և թէ մահս միայն կընար վերջ տայ մեր վէճերուն :

Քաղքէն հարիւր քայլի չափ հեռացանք : Վեր սուրերն իրարու ընդհարեցան . վիրաւորեցի և զրեթէ անմիջապէս զինաթափ թողուցի Սինըլէն : Դժբաղդութեամն վրայ այնքան կատդեցաւ որ չու վեց կեանքն իզմէ ինդրել և Մանօնին հրաման թէ կը պարտառըէինք իրարու զլաւիը կարել . երթանք տեմնենք թէ ո՛վ պիտի ըլլայ աւելի բարեբաղըր : »

— Վերսատին միսինք , և մասածէ՛ որ ցմահ է այս անդամաննը : »

Արա յարձակեցաւ անմենինելի կատղութեամբ մը : Կը պարտաւորիմ խօստովանիլ թէ քաջ չէի զինապարժութեան մէջ , վասն զի բարիզի մէջ երեք ալլս դաս առեր էի միայն : Աէրը առլիս կատած :

Նորդեր . բայց և այնպէս Սինըլէ սուրը թեխա մէկ կողմէն միւմն անցունելով վիրաւորեց զիս , սակայն յարմար ատենին յարձակեցայ ես ալ , և այնպիսի սաստիկ հարուած մը տուի որ ոտներուս առջեն ընկաւ ամշարժ :

Հակառակ այն ուրախութեան զոր յաղթութիւնը կը տայ միշտ մահածին կրիւէ մ'ետք , անմիջապէս խորհեցայ այս մահուան հետեւանաց վրայ : Ես ոչ զթութիւնն , ոչ ալ մահուանս պայմանածամ կրնայի յուսալ : Արդէն զիսէի թէ կառավարիչն որքան սաստիկ կը սիրեր իր եղօրորդիին , հետեւարար ասպահով էի թէ ասոր մեռնիլը լսուելէն ետք ճամ մ'անգամ պիտի չբապաղէր մահս : Որպան ալ սահագալական ըլլար այս վախը , վրդովումիս զօրաւորագոյն պատճառն այն չէր : Մանօն , իր շահը , իր վտանգն և զինք կորուսելու հարկն այնքան կը խոսվէին զիս որ աչերուս առջեւ ու վարագոյր մը քաշելով կարելէին զիս ձանչելու այն վայրն ուր էի : Յաւեցայ Սինըլէն վիճակին վրայ , վաղահաս մահ մը միայն վիշտերուս միակ գարմանը կիրեար ինձ :

Սակայն այս խորհուրդն իսկ սաստիկապէս ուշաբրեց և որոշում մ'ընելու կարող ըրաւ զիս :

— Ի՞նչ , կուղէ՛մ մեռնիկ վիշտերուս վերջ տալու համար , զոչւցի : Աւրիմն կայ եղեր վիշտ մ'որ աւելի վախս կը տայ ինձ քան թէ սիրոհիէս զլկուիլու : Ա՛ս , ամենէն ծայրացեղ վիշտերը կրեց օդնելու համար սիրոհիիս , և զանոնք վայրապար կընըն ետք միայն մեռնելու խորհիմ :

Քաղքին ձամքան բռնեցի վերստին : Տունս մտայ , ուր Մանօնը վախէն և վրդովումին կիսամեռ զտայ : Ներկայութենէս հողի առաւ : Զէի կընար զաղանի պահէն այն սասկալի գէպըր որ պատահած էր ինձ : Երբ Սինըլէն ինչպէս մեռնիլը և իմ վիրաւորուիլը պամեցի , Մանօն նուաղելով զիրկս ընկաւ : Քառորդէ մ'աւելի աշխատեցայ զլնըն սթափելու համար :

Ես ալ կիսամեռ էի . Մանօնին և իմ ապահովութեան նկատմամբ ամենափոք նշոյլ մը չէի նշմարեր :

— Մանօն , ի՞նչ պիտի ընենք , ըսի երբ փոքր ինչ ոյժ առաւ . քա՞բէ , ի՞նչ պիտի ընենք : Հարկաւորապէս պէտք է որ չիռանամ :

Առաջին քաղքին մէջ մնալ: Այս, մնացիր, գեո. կրնաս երջանիկ ըլլալ հն, և ես կերթամ, կը հեռանամ քովէդ մահս զանելաւ համար վայրենիներուն կամ կատաղի զաղաներու. Ճիրամաններուն մէջ: »

Մանօն ուրեք ելաւ իր տիկրութեանը հակառակ, և ձեռքէս բըռնելով դէպ ՚ի դուրը տարաս զիս:

—Միասին փախչինք, ըստ, վայրկեան մը չկորուսնը: Սինը լին դիմակը կրնայ պատահաբար գտնուիլ, և թերես ժամանակ չունենանք հեռանալու: »

—Սիրելի Մանօնս, կրկնեցի բոլորովին շուարուն, ըսէ ինձ սահայն թէ ո՛ւր կրնանք երթալ: Եւք մը կը տեսնե՞ս: Սինթէ լաւագոյն չէ առանց ինծի հոս ապրելու ջանալդ, և կամովին զըւիս կառավարչին տանիլս: »

Այս առաջարկութիւնս բնդհակառակն աւելցուց անոր մեկնելու եռանդը. պէտք եղաւ իր հեռան երթալ: Բաւական խելք մնացած ըլլով վրաս, գուրս ենելէս առաջ քանի մ'ողելց ըմպելիք առի զօր ունէի սենեկիս մէջ, և այս ամեն պաշարը զոր կրցայ գրապաններուս մէջ խօթել: Ըստնք մեր ծառաներուն որք մօտակայ սենեկին մէջն էին, թէ կերթայինք մեր երենկյեան պոտյան ընելու (ամեն օր այս սովորութիւնը ունէինք), և քաղքէն հեռացանք այնպիսի արագութեամբ որու կարծես չէր ներեր Մանօնին փափկանութիւնը:

Թէ և տակաւին սառուզապէս չդիտէի թէ ո՛ւր պիտի երթայինք պահուելու, բայց և այնպէս երկու յոյս ունեցայ առանց որոյ նախապահի պիտի ըլլար ինձ մեռնիլ քանի թէ սառուզապէս չը զիտնալ ինչ որ կրնար պատահիլ Մանօնին: Տասն ամիսէ ՚ի վեր Ամերիկայի մէջ ըլլալով երկրին վրայ բաւական տեղեկութիւններ սուսցեր էի, ուստի զիտէի թէ ինչ կերպով կրնտելանային վայրենիները:

Կրնայինք անմայ ձեռքը յանձնուիլ առանց անկասկած մահուան մը դիմելու: Զանազան առիթներով տեսներ էի վայրենիները, և անմայ շնորհիւ ասոնց լեզուէն և սովորութիւններէն քանի մը խօսք և քանի մը բան անդամ սորվեր էի:

Այս միջոցէն ՚ի զատ անէի նաև ուրիշ միջոց մանգդացւոց կող

մէն, որք մնզի պէս նոր աշխարհին այն կողմերը հաստատութիւնուներ ունին: Սակայն կը վախնաշի հեռաւորութենէն: Միջև անոնց դալթականութեան երկիրները համեմելու համար կը պարտաւորէինք բալմաթիւ օրեր տեսող ամայի դաշտերէ անցնիլ, նաև քանի մը լեռներէ, ասոնք այնքան բարձր և դերբուկ էին որ ճամբան դըժուարին կերեար ամենէն շնական և ուժեղ մարդերուն: Կը յուսայի սակայն թէ կրնայինք այս երկու միջոցներէն օգուտ քաղել, այսինքն վայրենիներէն մեզի առաջնորդելու համար, և Անգղիացիներէն մեզի իրենց բնակարաններն ընդունելու համար:

Երկար ժամանակ քաղեցինք որքան որ Մանօն քաջասրտութեամբը կրցաւ դիմանալ քայլելու, այսինքն երկու մղմի չափ, վասն զի այս աննաման սիրութին շարունակ մերժեց աւելի շուտ կանկ առնուլ: Վերջապէս բոլորովին յոդնելով խոստովանեցաւ թէ անկարելի էր տեսլի առաջ երթալ: Նրդէն զիշեր էր. լայնատարած դաշտի մը մէջ տեղը նստանք առանց ծառ մը գտնել կարենալու որպէս զի սպասարկութինք անոր տակ: Մանօնին առաջին հողն եղաւ վէրքիս կապը փոխել, որտվ ինքն անձամբ կապած էր զայն մեր մեկնելէն տառաջ: Ընդունայն հակառակեցայ իր կամքին: Ալ բոլորովին վհատած պիտի ըլլայի զինքը, եթէ իր անձին պահպանութեան վրայօք խորհելէս առաջ չտայի իրեն զիս հանդիսու և վտանգէ ազատ կարծելու զոհուանիկութիւնը: Քանի մը վայրկեան իր փափաներուն հնազանէցայ, լոելեայն և երախտագիտութեամբ ընդունեցայ իր խնամքը:

Բայց երբ Մանօն իր կաթողին սէրը գոհ ըրաւ, ինչպիսի եռանդով իմս ալ սկսաւ իրեն համար: Բոլոր զիեսաներս հանեցի զանոնք իր տակը փոխելով զեանին կարծրութիւնը ամոքելու համար: Իր կամքին հակառակ համազեցի զինքն թող տալու ինձ որ իրեն համար դործածեմ ինչ որ կրցայ երեւակայել իրը նուալ անհանդստութիւն տեսող: Իր ձեռները տաքցոցի հրատապ համբացներովս և շունչիս ջերմութեամբը: Գիշերն ՚ի բուն արթուն կեցայ իր վրայ հըսկելով և աղաչելով Աստոծու որպէս զի վայրկեան մ'անոյշ և և հանդարտ քուն շնորհէ անոր: Ո՛ Աստուած, որքան սաստիկ և անկեղծ էր մաղթամիս, բայց ինչպիսի անողոք վճիռովլմ'որոշեցիր շընդունիլ աղօթքս:

« Անրէ՛ եթէ քանի մը խօսքով՝ կաւարտեմ պատմութիւն մ՞որ կը մասցնէ դիս : Կը պատմեմ քեզ գժբաղդութիւն մ՞որու նմանն եղած չէ բնաւ . բոլոր կեանքս ուհիմանաւած է լալու այս գժբաղդութեան վրայ : Բայց թէ և անշնկհաստ յիշովութեանս առջեն է այս , հոգիս կարծես սարսափահար կը նահանջէ ամեն անգամ որ կոմիմ բայսնել այս աղլետալի իրողութիւնը :

Գիշերուան մէկ մասը հանդարտօրէն անցուցեր էինք . կը կարծէի թէ սիմելի տարգիտ չիս քնացած է , և վախնալով իր քունքանհանցիս ընելու չէի համարձակեր ամենափոքր շունչ մը հանելու : Լուսնալու մօտ խիլ նշամարեցի թէ իր ձեռները ցրտահար և գողդոջուն էին . կործքիս մօտեցացի զանոնք տարցնելու համար : Մանօն զդաց այս շարժումը , և խմ ձեռներս աշ ինք բռնելու համար ջանք մ՞ը ներով ըստ ինձ տկար ձայնով թէ իր յետին ժամը հասած կը կարծէր :

Առջի բերան այս խօսքը գժբաղդութեան մէջ սովորական խօսք մը սեփեցի , և սիրոյ կաթողին միսիթարութիւններով պատասխանեցի : Սակայն իր յաճախի հառաջանքը , հարցումներուս գէմ լուսթիւնը , ձեռներուն սեղմանիլը , որոնց մէջ տակալին կը բռնէր իմիններս , հասկցուցին ինձ թէ իր գժբաղդութեան վախնանը կը մօաէր :

Մի՛ պահանջեր իդմէ որ նկարադրեմ քեզ զգացումներս , ոչ ալ ըսեմ իր վերջին խօսքերը : Կորուսի Մանօնը . իրմէ սիրոյ նշաններ առի վերջն շունչը տալու միջոցին իսկ . այս աղետալի և ողբալի գէպքէն ահա այգան միայն կրնամաեղեկութիւն տալ քեզ :

Հոգիս Մանօնին հողին ետևէն չընաց : Երկինք անջուշտ բաւառ կան խստութեամբ պատմուած չհամարեց դիս , ուստի ուզեց որ այսուհետեւ հալւմաշ և թշուառ կեանք մը վարեմ : Կամովին հրածեշտ կը տամ այսուհետեւ աւելի երջանկութեամբ վարելու զայն :

Բերանս սիրելի Մանօնիս երեսին և ձեռներուն վրայ բրած կեցայ քսանուչորս ժամէն աւելի : Դիտաւորութիւնն էր այս կացութեան մէջ մեռնիլ : Սակայն երկրորդ օրն առտու խորհեցայ որ իր մարմինը մահէս ետք վայրենի դաշտներուն ճարակ սիմի ըլլայ : Որոշեցի թաղել զայն և իր փասխն վրայ սպասել մահուան : « Յօթութեան և ցաւին ինձ պատճառած տկարութեան պատճառաւ արդէն այնքան մօտ էի

վախճանիս որ բիւր ջանքի հարկաւորութիւն ունեցայ ոտքի վրայ կեց նալու . համար : Պարսաւ որեցայ զիմելու այն ողելից ըմպելեաց զու հետա առեր էի , այս ըմպելիքն ոյժ առաւ ինձ որբան որ պէտք էլու այն արտմանի գործին համար զոր պիսի կատարէի : Ինձ գժուարին չէր զետինը բանալ այն տեղն ուր կը գտնուէի . աւազա դաշտ մ՞էր այն . սուրս կարեցի զետինը անով փորելու համար , սակայն ոչ այնքան օգնեց ինձ այն որբան ձեռներս : Լայն փառ մը/բայցի , մէջ ըստ գրի սրախ աստուածը , բոլոր զգեստներով զայն ծածկելու հակը տանելին ետք որպէս զի հողը չկարենայ գաղնալ մարմոցն : Սակայն ամենակատարեալ սիրոյ բռուն աշխատժովի իր գիտիլ բիւրից համբուրելին ետք փառը զրի : « Յորէն քովը նստայ , երկար ատան իրեն նայեցայ , չէի կրնար իր փառը զոյելու համարձակիլ : Վերջասկետ ոյժերս մկան նուալիլ , և վախնալով բոլորովին անոյժ մնալու ձեռու նարկութիւնս աւարտելին առաջ , ընդ միշտ երկրիս ներքեր թաղեցի այն մաման որ իր բնակուլ արարածներուն ամենէն կատարեալն ու յարգելին էր . ասպա փասխն վրայ պատկեցայ երես գէտ աւազը դարձացած , և աշերս երբէք չբանալու գիտաւորութեամբ զոյելով երկիլից օգնութիւնը հայցեցի , և համբերութեամբ մահուան սպասելի :

Սակայն բան մը կայ որ գրեթէ անհաւատալի պիտի երկայ քեզ . այսինքն այս սղալի պաշտօնը մինչև վերջը կատարելու ոչ աշերէս արաօսը մ՞ելաւ , ոչ ալ հառաջանք մը բերնէս : Այն սասալիկ զարհուրանըը , որ կը դրաւէր զիս , և մեռնելու հաստատ որոշումը յուսահատութեան և ցաւին ամեն արտայայտութիւնները կարեր էին : Ուստի փասխն վրայ բանած դրբին մէջ քիչ ատեն մնալու ետք կորուսի այն փանաթի ճանաչուութիւնը և զգացումը որք կը մնային ինձ :

Այս պատմածներս լսելէդ ետք պատմութեանս եղակացութիւնն այնքան քիչ կարեւորութիւն ունի որ զայն լսելու գժուարութիւնը կրելու չարծեր : Անըլէին մարմինը քաղաքը ասարտելով և զգուշ շութեամբ իր վէրբերը քննուելով համացուեցա որ ոչ միայն մեծ չէր , այլ նաև վահնդաւոր վէրը մ՞անգամ չէր աւած : Իս մացուց իր հօթեղաօրը թէ ինչ կերպով մեր մէջ տեղի ունեցած էր իրողութիւնը , և իր վեհանձնութենէն զրդուելով իմինիս արդիւնքը

Հրապարակաւ յայտնեց բնոտել տուին զիս , և Սամսօնին հետ բառ ցակայութիւնս դիտելով կասկած ըրին թէ դուցէ փախեր ենք : Չառ ուշ ըլլալով չէին կրնար մարդ որկել զիս դանելու համար . բայց հետեւալ օրն և միւս օրը զիս բնտալու և գանելու աշխատեցան :

Սամօնին փոսին վրայ դտան զիս առանց կենդանութեան երևոյթ ունենալու , և որոնք որ զիս այս վիճակին մէջ դտան , զիս զրեթե մերկ և վէրքիս արիւնով շաղակուած տեմնելով անկասկած հաւատացին թէ կողոպտաւած և սպանուած էի : Զիս քաղաքը տարին : Փոխադրութեան շարժումը սմափեց զիս : Հաւաչները զոր հանեցի աշերս բանալով հեծելով նորէն ինքըինքս կենդանիներու մէջ տեմնելով իմաց տուին թէ տակաւին գարման ընդունելու վիջակին մէջն էի . բարեյաջող կերպով գարմանուեցայ , բայց և այնովէս նեղ բանտի մը մէջ փակուեցայ : Դասա նայուեցա , և որովհեաւ Սանօն չէր երևար , զիս ամբաստանեցին սնողելով թէ կատաղի և նախանձուարիկութեամբ մը մեռցոցեր եմ զինքը : Բնականաբար պատմեցի ողորմելի արկածս : Ախնըլէ՝ չնայելով այն վշտաղին բարիս թեան ուրով համարեց զինքն այս լուրը , ինձի համար թողութիւն ինքնեւ լուրը , իմաց համար երկար վեհական տնեցաւ . և ստացաւ ազատում :

Սննդան տկար էի որ ստիպուեցան բանտէն անկողինս տանիլ զիս , ուր ծանր հիւանդութիւն մ'երեք ամիս կեցուց զիս : Կեանքին դէմ ատելութիւնս չէր նուազեր . շարունակ մահ կը խնդրէի , և երկար ատեն յամառութեամբ մերժեցի ամեն գեղեցը : Բայց երկինքն այն քան խստութեամբ զիս պիտառութիւն ունէր ինձ օգտակար ընելու դժբաղդութիւններս և պատիժներս . լուսառուց զիս իր լցուերավակ , որք նորէն ընտանեաց և դաստիարակութեանս արծանի զաղափարներ յիշեցուցին ինձ : Համարատութիւնն սկսած ըլլ լալով հողիս մէջ փոքր ինչ ծնիլ , այս փոփախութեանս ետևէն հաս սաւ իսկոյն բժշկութիւնս : Սկսայ պատույ ներշնչումներուն համեմատ ասրիլ և վարուիլ բոլորովին , և շարունակեցի պղսի պաշտօնս կատարել՝ Փրանսայի նաւերուն սկսելով՝ որք ամեն տարի անդամ մ'Ամերիկայի այն կողմը կերթան : Արոշեր էի հայրենիքս վերադառնուլ՝ իսկեւ և կանոնաւոր կեանքով մ'ընթացքիս դայթակութիւնը մոռցնելու համար : Ախնըլէ սրբելի Մասօնիս մարմինը պատուաւոր տեղ մը փոխադրել տարու հոգասիրութիւնը ունեցած էր :

Սոռողմանալէս գրեթէ վլց շաբաթ ետք օր մ'երբ առանձին ման կը դայի ծովեզով , տեսայ նաւի մը դալը , զար առետբական զորածեր Նուվել-Օրէանի կը բերէին , ուշագրութեամբ կը նայէի նաւէն ելնողներուն : Ծայրայեղ զարմանը մ'առաւ զիս երբ գէպ 'ի քառ զաքը յատաջացաներուն մէջ Թիգերքը ճանչեցի : Խմացոց ինձ թէ այս ուղեղորութիւնը բած էր մի միայն զիս տեսնելու , նաև յոր դորելու . համար որ Գրանսա վերադառնամ , թէ Հավելէն դրած նամակս ընդունած ըլլալով ինքն անձամբ հնի եկած էր բերելու համար այն ստակը զար ուղեր էի իրմէն . թէ ամենասատիկ յաւ զդացած էր մեխած ըլլալս իմանալով , և թէ անմիջապէս ինքն ալ ետեէս պիտի մեխնէր եթէ առաղաստ բանալու . և Համբայ ելնելու պատրաստ նաւ մը գտած ըլլար , թէ ամիսներով այլ և այլ նաւահանդիստաներու մէջ բնտաւած էր այնպիսի նաւ մը , և թէ վերջապէս Սէն-Մալյոյի նաւահանդստին մէջ հանդիպած ըլլալով նաւի մ'որ Սէն-Մարթինիք երթալու համար երկալը կը վերջնէր , նոյն նաւը մտած էր յուսալով թէ անկէ կրնայ գիւրութեամբ Նուվել-Օրէան անցանիլ . թէ Մալօեան նաւը Ճամբուն մէջ սպանիացի ծովահէններէ բնտաւած և անմաց կղզներուն մին տարուած ըլլալով , ինքը ճարազ կութեամբ խոյս տուած էր , և թէ այլ և այլ տեղեր երթեւեկելէն ետք հանդիպած էր այն պղտի նաւուն որ պահ մ'առաջ հասած էր , և թէ անոր շնորհի քովս զարու բարեկազդութիւնն ունի :

Որբան երախտապիտութիւն ցուցնէի այսքան վեհանձն և հաւատարիմ բարեկամի մը , քիչ էր : Տունս տարի . տէր ըրի վինքն այն ամեն իրերու զոր ունէի : Խմացոցի իրեն Գրանսայէն մեխնէլ թի վեր ինձ պատահած ամեն իրողութիւնները , և Թիգերքին պատճառելու . համար ուրախութիւն մը զոր չէր յուսար , ըսի թէ առաքինութեան այն սերմերը զոր ժամանակաւ սրտիս մէջ ցանած էր և կսկսէին այնպիսի պատուղներ տալ որոնմէ ինք գոհ պիտի ըլլար և Երդում ըրաւ թէ այսքան քաղցր խոստում մ'իր Ճամբորդութեան քողոր յողնութիւնները կը վարձատրէր :

Միասին երկու ամիս կեցանք Նուվել-Օրէանի մէջ Գրանսայէն նաւերուն զալստեան պղասելով և վերջապէս Ճամբայ ելնելով ասկից տամառուհինդ օր առաջ հասանիր Հավելը-Տը-Կրաս : Հասնելով նա-

մակ մը գրեցի ընտանեացու : Անդքանիկ եղսօրս նամակեն իմացայ  
հօրս մաշտամ տրամալի լուրը , մա՞հ , որու շատ իրաւամբ կը վախ-  
նամ թէ զացէ ես ալ կերպիս մը պատճառ . եղեր էի իմ մոլորում-  
ներովս :

Հովք նպաստուոր ըլլալով գետ ՚ի Գալէ , իսկոյն նաւ մը մտայ ,  
դիտաւորութիւն ունենալով այս քաղքէն քանի մը մզն անդին բնա-  
կող աղնուականի մը քոմի երթալու որ ազգականներուս մին է , և  
ուր եղասցրս իմ զալսուեան պիտի սպասէ , ինչպէս զբեր է իր նա-  
մակին մէջ :



ՎԵՐՋ

ՀՀ Ազգային գրադարան



NL0310265

